2006, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (231)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Հոկտեմբերի 5-ին*

### Ռումինիայի նախագահին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուին եւ իր գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ: Հանդիպմանը ներկա էր նաեւ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը:

Ողջունելով Ռումինիայի նախագահին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները ջերմ եւ սերտ բարեկամական զարգացում են ապրում. *«Սա շարունակականությունն է այն ջերմ կապերի, որ առկա են եղել մեր ժողովուրդների միջեւ վաղ միջնադարից սկսած: Հաճելի է, որ հայ համայնքն այնտեղ շատ աշխույժ կյանքով է ապրում եւ մեր հայորդիներն իրենց նվիրյալ ծառայությամբ կարեւոր ներդրում են ունենում Ռումինիո կյանքից ներս»*,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում՝ վերհիշելով նաեւ Ռումինիայում ծնված եւ քաղաքացիություն ստացած Ամենայն Հայոց 130-րդ Հայրապետ երջանկահիշատակ Վազգեն Ա-ի գահակալության տարիները եւ նրա դերը Մայր Աթոռի բարեկարգման գործում: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նաեւ Եվրոպական Միության ընդլայնման եւ առաջիկայում Ռումինիայի՝ ԵՄ-ին անդամակցելու կապակցությամբ: Նորին Սրբությունն իր եղբայրական սիրո ողջույնը հղեց Ռումին Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Թեոկտիստ պատրիարքին:

Իր հերթին Ռումինիայի նախագահն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար՝ իր հարգանքը հայտնելով Հայ Եկեղեցու եւ Հայոց Հովվապետի հանդեպ: Նախագահ Բասեսկուն կարեւորեց հոգեւոր արժեքների, կրոնների, ինչպես նաեւ միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսությունների դերը մարդկության առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծման գործում: Նշեց նաեւ, որ մեծ հարգանք է տածում հայ ժողովրդի պատմության նկատմամբ եւ ընդգծեց, որ Հայաստանը, իբրեւ քրիստոնյա պետություն, իր տեղն ունի եվրոպական քրիստոնյա պետությունների կողքին:



*Հոկտեմբերի 12-ին*

### ԱՊՀ եւ բալթյան երկրների երկաթուղային փրանսպորփի խորհրդի անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ եւ բալթյան երկրների երկաթուղային տրանսպորտի խորհրդի 44-րդ նիստի մասնակիցներին՝ ուղեկցությամբ «Հայկական երկաթուղի» ընկերության գլխավոր տնօրեն Արարատ Խրիմյանի:

Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց նրանց ծառայությունը եւ առաքելությունը՝ նպաստելու ոչ միայն խորհրդի անդամ երկրների տնտեսական զարգացմանը, այլեւ ժողովուրդների միջեւ բարի հարաբերությունների եւ համագործակցության սերտացմանն ու զորացմանը:

ԱՊՀ եւ բալթյան երկրների երկաթուղային տրանսպորտի խորհրդի անդամների անունից Նորին Սրբության ընդունելության համար շնորհակալություն հայտնեց «Ռուսաստանի երկաթուղիներ» ընկերության նախագահ Վլադիմիր Յագունինը՝ ներկայացնելով նաեւ խորհրդի հերթական նիստի նպատակը եւ աշխատանքները:

*Հոկտեմբերի 13-ին*

### Եվրոպայի խորհրդի անդամ երկրների արդարադատության նախարարների 27-րդ համաժողովի մասնակիցներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի անդամ երկրների արդարադատության նախարարների 27-րդ համաժողովի շուրջ 150 մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի:

Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ Նորին Սրբությունը նրանց ներկայացրեց Հայ Եկեղեցու հոգեւոր կենտրոնի պատմությունն ու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Անդրադառնալով համաժողովի՝ «Տուժողներ՝ կարգավիճակը, իրավունքները եւ օժանդակությունը» թեմային՝ նա մասնավորաբար ասաց. *«Այսօր տուժածների իրավունքների եւ օգնության խնդիրը՝ որպես մարդկությանը հուզող հրատապ հարց, նաեւ դարձել է ծեր քննարկումների նյութը, սակայն այդ խնդիրը ուղեկցել է Եկեղեցուն իր հիմնադրման առաջին իսկ օրից, առաջին քրիստոնեական համայնքների ձեւավորման շրջանից: Միշտ եկեղեցականն առնչվել է այդ խնդիրներին եւ փորձել իր օգտակարությունը, զորակցությունը բերել նման իրավիճակներում գտնվող մարդկանց»*: Նորին Սրբությունը նշեց, որ ներկայիս բարդ իրավիճակներում այդ երեւույթներն ավելի մտահոգիչ են, եւ Եկեղեցին էլ իր առաքելության հիմնական ոլորտներից մեկն է դիտում տուժողներին օգտակար լինելը: Վեհափառն առավել կարեւորեց Եկեղեցու մասնակցությամբ երեւույթի հոգեբանական հետեւանքների վերացման անհրաժեշտությունը:

### Քահանայական եւ սարկավագական ձեռնադրություն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սբ Խաչի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Սրբազան արարողությունը հանդիսապետում էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հընթացս Սբ Պատարագի, ձեռամբ գերաշնորհ Տ. Ներսես արք. Պոզապալյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Քահանայից լսարանի ինը սարկավագներ ստացան քահանայական աստիճաններ:

*Շարունակությունը՝ էջ 2*

# ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ «ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ» ԴՊՐՈՑԸ ՍԿՍԵՑ 2006 Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ





Հոկտեմբերի 1-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Մոսկվայի Հայոց Եկեղեցու կրթական կենտրոնի 2006 թ. ուս. տարվա բացման արարողությունը: Տարեմուտի սկիզբն արտահայտող այս հավաքը, իր տեսակի մեջ լինելով առաջինը, կազմակերպվել էր նորակազմ դպրոցի տնօրինության ու աշակերտական կազմի ջանքերով:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում դպրոցում սովորելու ցանկություն էին հայտնել ավելի քան 150 աշակերտ, որոնց թիվը գնալով օրեցօր ավելանում է: Կրթական կենտրոնը հնարավորություն է տալիս աշակերտներին հաճախելու մայրենի լեզվի ու գրականության, հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու պատմության դասընթացներին, ինչպես նաեւ երգի, պարի ու շախմատի խմբակների:

Հավաքի գեղարվեստական մասում իրենց հայրենաշունչ, հուզիչ կատարումներով ներկաներին ողջունեցին դպրոցի փոքրիկ սաները՝ արտասանելով Հայաստանին ու մայրենի լեզվին նվիրված քառյակներ: Ողջույնի խոսք ասաց նաեւ Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կարգի մեթոդիստ, մանկավարժ տիկ. Էլեոնորա Մանուչարյանը՝ դպրոցին նվիրելով իր հեղինակած «Մայրենի լեզվի ուսուցման մեթոդական ձեռնարկը»՝ հայրենիքից դուրս, ռուսալեզու շրջանակներում գործող հայկական դպրոցների համար:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրհնության ու բարեմաղթանքի խոսքն ասաց Ռուսահայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը՝ մասնավորապես նշելով, որ տարիներ առաջ Մոսկվայի քաղաքային իշխանությունները, վարձակալական հիմունքներով թեմին էին տրամադրել նախկինում որպես մանկապարտեզ գործող, սակայն այրված ու հիմնովին ավերակ այս շինությունը, որը մի քանի ամիսների ընթացքում հիմնովին վերանորոգվել է եւ այսօր իր հյուրընկալ դռներն է բացել մոսկվայաբնակ մեր հայրենակիցների առջեւ՝ որպես հայեցի կրթության ու դաստիարակության կենտրոն:

Հավաքի վերջում հնչեցին զանգի ղողանջները, որից հետո մանուկներն անցկացրին մայրենի լեզվի իրենց առաջին դասը: Աշակերտներին տրվեցին այբբենարաններ ու աշխատանքային տետրեր, ինչպես նաեւ մնացյալ բոլոր անհրաժեշտ դասագրքերը:

*ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

## Օծվեց Կոտայքի մարզի Ջրաբեր գյուղի նորակառույց Սբ Աստվածածին եկեղեցին

Հոկտեմբերի 3-ին աննախադեպ եռուզեռ եւ պատմական օր էր Ջրաբեր գյուղի բնակչության համար:

Ջրաբերցիները հուզումով ու խանդավառությամբ ականատես եղան երկար տարիների իրենց երազի իրականացմանը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, ձեռամբ առաջնորդ սրբազան հոր, մասնակցությամբ Կոտայքի թեմի հոգեւոր դասի՝ օծվեց Ջրաբեր գյուղի նորակառույց Սբ Աստվածածին եկեղեցին: Եկեղեցին վերանորոգվել էր Ջրաբեր գյուղի բնակիչ Սամվել Հարությունյանի բարերարությամբ:

Եկեղեցու օծումից հետո Առաքել սրբազանն իր խոսքում մասնավորաբար ասաց. *«Այս եկեղեցին քարեղեն կառույց է, բայց որպեսզի այն վերածենք հոգեւոր կառույցի՝ Աստծու տան, անհրաժեշտ է, որ մեր ամենօրյա այցելությամբ, աղոթքով այս քարերին կենդանություն պարգեւենք եւ այն լցնենք ոսկորով, մսով, ջիղով եւ արյունով»:*

Օծումից հետո Սուրբ Պատարագ մատուցեց թեմակալ առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը: Վերջում եկեղեցու բարերար Սամվել Հարությունյանի կողմից ներկաներին բաժանվեց մատաղ:

Եկեղեցու օծման արարողությանը մասնակցում էին ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանը, Կոտայքի մարզպետ Կավալենկո Շահգալդյանը, ՀՀ Կառավարության ներկայացուցիչներ, Աբովյանի քաղաքապետ Կարո Իսրայելյանը, մարզային ու քաղաքային իշխանության ներկայացուցիչներ:

*ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ*

# ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Քահանայական եւ սարկավագական ձեռնադրություն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



*Սկիզբը՝ էջ 1*

*Սկիզբը՝ էջ 1*

Նորընծա քահանաները վերանվանվեցին հոգեւոր նոր անուններով՝ Հովհաննես սրկ. Ցապարյանը կոչվեց Տ. Վարագ, Սահակ սրկ. Ղազարյանը՝ Տ. Աշոտ, Խոսրով սրկ. Եսայանը՝ Տ. Թորոս, Սամվել սրկ. Խանոյանը՝ Տ. Շիրակ, Արմեն սրկ. Աշուրյանը՝ Տ. Մովսես, Հովհաննես սրկ. Գրիգորյանը՝ Տ. Հակոբ, Անդրեյ սրկ. Սարգսյանը՝ Տ. Նշան, Գարեգին սրկ. Համբարձումյանը՝ Տ. Արսեն եւ Գեւորգ սրկ. Մկրտչյանը՝ Տ. Պսակ:

Մայր Աթոռում իրենց քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ, նրանք կանցնեն հովվական ծառայության:

***

Իսկ հոկտեմբերի 8-ին Մայր տաճարում Սուրբ Պատարագի ժամանակ տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն: Ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 27 սաներ ստացան սարկավագության աստիճան:

Ձեռնադրված սարկավագները, ուսումնառության ավարտից եւ ավարտաճառի պաշտպանությունից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու թեմերում եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի այլ կառույցներում:

## Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանի մեծարման երեկոն Մայր Աթոռում

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ մեծարման երեկո՝ նվիրված Հայ Եկեղեցու ավագագույն եւ վաստակաշատ հոգեւորական, ճեմարանի նախկին տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանին: Երեկոն հանդիսապետում էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսները, ուսանողությունը եւ հյուրեր:

«Սիրելի՛ տեր հայր, դուք ունեք զավակներ, բայց ունեք նաեւ հարյուրավոր զավակներ, որոնք ներկա են այստեղ եւ որոնք իրենց ծառայությունն են բերում աշխարհով մեկ սփռված մեր հայ համայնքներում: Այդ զավակներիս կյանքի մեջ դուք մեծ դեր եւ նպաստ ունեք, եւ մենք մինչեւ մեր կյանքի վերջին օրերը կհիշենք այն քաղցր զրույցներն ու խրատները, որ երբեք չեք խնայել եւ բաշխել եք մեզ հայրաբար»,- բացելով հանդիսությունը՝ ասաց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վրդ. Նանյանը:

Ներկաներին իր սրտի խոսքն ասաց նաեւ մեծարյալը: Նա կարեւորեց այն բարձր արժեքները, որ ստացել է մեր Եկեղեցու հայրապետներից եւ արժանավոր եկեղեցականներից, ապա մասնավոր շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին՝ ճեմարանի նկատմամբ ունեցած իր հոգատար ու արդյունաշատ ուշադրության համար. *«Գեւորգյան հոգեւոր ճեմարանը կոչված է ազգային-եկեղեցական կյանքի ոլորտների համար բանիմաց ու նվիրյալ եկեղեցականություն պատրաստելուն, որ վառ պահեն մեր ազգային- կրոնական զգացմունքները, մեր քրիստոնեական բարձր արժեքները»*,- նշեց տեր հայրն իր խոսքում:



Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի խոսքով: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Տեր Եղիշեի 55 տարիների վաստակը Հայ Առաքելական Եկեղեցում. *«Քաջ իմանալով Տեր Եղիշեի 55 տարիների ծառայական կյանքը՝ վստահորեն կարող ենք հաստատել, որ նա անմնացորդ նվիրումով է տվել իր կյանքը մեր Եկեղեցուն: Ուր էլ որ եղել է, ինչ պաշտոնի էլ որ նրան նշանակել են, ինչ հանձնարարական էլ որ ունեցել է, կատարել է անմնացորդ սիրով: Սիրով է կատարել, որովհետեւ մեծ է իր սերը մեր Եկեղեցու եւ մեր ժողովրդի նկատմամբ»:* Վեհափառ Հայրապետը նաեւ ընդգծեց, որ Տեր Եղիշեն, լինելով մեր ավագագույն հոգեւորականներից, իր անձով կրողն ու փոխանցողն է Գեւորգ Զ Կաթողիկոսից սկսած մեր երանաշնորհ հայրապետների ու այլ եկեղեցականների փառապանծ ավանդների: Իր խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանին շնորհեց լանջախաչ:



Երեկոյի ընթացքում ներկայացվեց Տեր Եղիշեի կյանքն ու գործունեությունը, հնչեցին դասախոսի եւ ուսանողի խոսքեր, ասմունք, երգեր՝ ճեմարանի երգչախմբի կատարմամբ, ցուցադրվեց «Շողակաթ» հեռուստաընկերության նկարահանած «Սա է մարդը՝ քահանան» ֆիլմը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ
## (1166-1173)

Ներսեսի աթոռակալությամբ սոսկ պահպանվեց կաթողիկոսության ժառանգման նորահաստատ կարգը, առավել եւս որ նա փաստական կաթողիկոս էր եղել եղբոր կյանքի վերջին շրջանում: Հավանական է ենթադրել նրա ծնունդը 1100 թվին Ծովքում: Կրթվել է Շուղրի Կարմիր վանքում՝ վանահայր Ստեփանոս Մանուկի անմիջական հսկողությամբ եւ Բարսեղ կաթողիկոսի պաշտպանության ներքո, եղբոր կողմից ձեռնադրվել է քահանա եւ այնուհետեւ եպիսկոպոս՝ երիտասարդ հասակում: Կոչվել է Կլայեցի հայրապետանոցը Ծովքից Հռոմկլա տեղափոխվելուց հետո, երբ նա մշտապես հաստատվեց նոր հայրապետանոցում: Սակայն նա Կլայեցի մականունից առավել հիշատակվում է Շնորհալի մակդիրով, որը կրել են նաեւ Հայոց եկեղեցու եւ մշակույթի այլ գործիչներ եւս: Եվ քանի որ Շնորհալի են կոչվել Ներսեսի աշակերտներից նաեւ Իգնատիոսը, Սարգիսը եւ Բարսեղը, Մ. Օրմանյանը հակված է կարծելու, թե Ստեփանոս Մանուկի աշակերտներին տրված ընդհանրական մակդիր է եղել: Սակայն, այսուհանդերձ, Շնորհալի մակդիրն այսօր կապվում է առավելապես Ներսես Դ Կլայեցու անվան հետ՝



իբրեւ առանձնահատուկ կոչում: Նա կաթողիկոս դարձավ արդեն 60-ն անց տարիքում (թերեւս 66 տարեկանում):

Ներսես Կլայեցին իր գրական գործունեությունն առավելապես ծավալեց դեռ մինչեւ կաթողիկոս դառնալը: Նրա հեղինակությամբ պահպանվել են առակներ եւ հանելուկներ, քերթողական ոտանավորներ, փոքրիկ տաղեր, որոնք, անտարակույս, նրա երիտասարդական շրջանի գործունեության արգասիք են: Այդ են ցույց տալիս նրա առանձին հիշատակություններն այս կամ այն առիթով: «Եղեսիայի ողբը», առանց կասկածի, գրվել է 1144 թվին կամ շատ չանցած, երբ նա դեռ առաջացած տարիք չուներ: Ստեղծագործությունները հավաստում են, որ նա օժտված է եղել բանաստեղծական եւ երաժշտական ձիրքերով, որոնք նա ի սպաս դրեց եկեղեցական արարողությունները հարստացնելու եւ բարեկարգելու համար: Հատկապես շատ են նրա ջատագովական աշխատանքները, որոնց թերեւս նշանակալից մասը պաշտոնապես կիրառության մեջ մտավ դեռեւս Գրիգոր կաթողիկոսի օրոք: Նրա գրչին են պատկանում նաեւ խրատներ, ներտաղականներ, հորդորակներ եւ բազմաթիվ տաղեր:

Նրա հայրապետության սկիզբը նշանավորվեց «Թուղթ ընդհանրական»-ով, որը, որպես օրհնության անդրանիկ կոնդակ, ուղղվեց բոլոր հայկազուններին: Այդ հզոր գործը մինչեւ օրս էլ չի կորցրել իր կարեւորությունն ու ազդեցությունը եւ անտարակույս եկեղեցական կանոնների ընտրելագույն ձեռնարկ է եւ եկեղեցական բարեկարգության հիանալի ուղեցույց: Ենթադրվում է, որ դա նա գրեց եղբոր կողմից կաթողիկոս ձեռնադրվելուց մինչեւ եղբոր մահին ընկած երեք ամսում: Հիշատակության արժանի է այս փաստը, որ կաթողիկոսը դրանում նշում է, որ հայերը ցրված են իրենց սեփական Հայաստան աշխարհում, արեւմտյան կողմերում, միջերկրայքում եւ այլ աշխարհներում, իսկ հայոց հայրապետը հեռացել է հայության բազմամարդ կենտրոններից եւ որսորդնե-



րից ու շներից վախեցած այծյամի պես հաստատվել է քարանձավներում, եւ որ իր ազգի թագավորական քաղաք եւ բազմաժողով չկա, որտեղ հաստատված լիներ հայրապետական աթոռը: «Ընդհանրական թուղթը» ուղղված է եկեղեցականներին եւ աշխարհականներին, դրա հետ մեկտեղ նաեւ հայրապետական օրհնությանը:

«Ընդհանրական թղթի» առաջին գլուխն ուղղված է վանական հոգեւորականներին, որոնց տրված ընդհանուր կանոններից ու խրատներից զատ, ասվում է, որ միաբանությունը չթողնեն եւ առանձին չբնակվեն: Արգելված է աշխարհական բնակությունը, սակայն եթե կա անհրաժեշտ պատճառ, ապա ամենայն զգուշությամբ պետք է փոխել բնակության վանքերը, իսկ չհնազանդվողները զրկվում են հաղորդությունից եւ օրինավոր թաղման իրավունքից: Եվ եթե նրանք մահվան շեմին չզղջային, ապա նրանց թաղումը կատարվելու էր որպես աշխարհականի: Սակայն այս իրողությունը չէր տարածվելու հյուր գտնվողների, ծերացածների եւ պաշտոնով վանքից դուրս գտնվողների վրա: Անդրադառնալով կրոնավորների նյութական շահագործությամբ զբաղվելուն՝ նա բավականանում է՝ հանձնարարելով, որ ստացված արդյունքը գործածեն աղքատների, կարոտյալների, տառապյալների ու գերյալների վրա եւ ի մասնավորի՝ եկեղեցուն տան Աստծու բաժինը: Սրանով հանդերձ՝ կրոնավորաց մասը կրկին հայտնում է, որ օրենք է սահմանված կրոնավորների անինչք լինելու մասին: Խոսվում է նաեւ՝ շոշափելով կարգապահական կետերը. հարբեցողությանը, վանքից վանք անցնելուն, թափառաշրջիկությանը, մեծավորի դեմ տրտնջալուն, ագահ լինելուն, ոչ պատշաճ միջոցներով իրավունքը պաշտպանելուն, ստախոսությանն ու լեզվագարությանը, բամբասանքին եւ անիծելուն, վնասակար վիճաբանություններին եւ խեղկատակությանը տուրք տալու մասին: Այնուհետեւ թուղթն անդրադառնում է վանականների ուխտերի առաջնորդներին եւ ընդգծում, որ գիտությունն ու առաքինությունը նրանց երկու աչքերն են, որոնք պետք է երկուսն էլ առողջ պահվեն, որպեսզի նրանք չնմանվեն միայնակեցների: Հանձնարարված է հոգ տանել ոչ միայն կրոնավորների նյութականին, այլեւ հոգեկանին, ոչ թե ոմանց սիրել եւ մյուսներին անտես առնել, կերակուրը բաշխել ըստ աշխատանքի չափի, բարձիթողի չթողնել ծերացյալներին եւ վտանգյալներին, չսեփականել վանքին եւ եկեղեցուն տրված նվերները: Նշվում է նաեւ, որ առաջնորդությանը չտիրանան ինքնակամ ախտով եւ կաշառքով: Ավելորդ չէ ասել, որ Շնորհալու այս կանոնադրությունները միանգամայն արդիական էին ոչ միայն Մ. Օրմանյանի, այլեւ կիրառական են մեր օրերում:

Այնուհետեւ Շնորհալին անցնում է ժողովրդին անմիջապես սպասարկող եկեղեցականությանը՝ խոսելով եկեղեցու առաջնորդ եպիսկոպոսների եւ այնուհետեւ քահանաների դասի մասին: Առաջնորդ ասելով՝ նա ի նկատի ունի վանահայրերին, իսկ եպիսկոպոսների մասին խոսելիս ի նկատի ունի ժողովրդի եւ թեմերի մեծավորներին: Նա ակնարկում է այն եպիսկոպոսներին, որոնք կաշառքով, այլազգիների օգնությամբ կամ հայրապետներին աթոռընկեց անելով են տիրանում եպիսկոպոսություններին եւ արժանի չեն քահանայական թաղման եւ պատարագում հիշվելու: Հեղինակը նաեւ անդրադառնում է իր եղբոր հրավիրած մեծ սյունահոդոսին, որտեղ դատապարտվել էր Աղթամարի հակաթոռությունը: Քահանաների դասի առնչությամբ մանրամասն պարզաբանում է նրանց պաշտոնները: Մեղադրում է նրանց, որոնք հասարակական զգեստներով եւ կեղտոտ տրեխներով են եկեղեցու բեմ բարձրանում եւ պատարագ մատուցում:

Շարունակությունը՝ էջ 5

## ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006-ի թիվ 1-5, 11-18*

### ԱՍՏՎԱԾԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ սրբերի մասին լսելիս մենք նկատում ենք, որ նրանք բոլորովին ուրիշ մարդիկ են եւ բավականին շատ են տարբերվում մեզանից կամ մեզ ծանոթ մարդկանցից: Շատ դեպքերում նույնիսկ մեզ անհասկանալի են թվում նրանց այս կամ այն արարքները, եւ մենք գիտակցում ենք, որ նրանց տեղը լինելու դեպքում մենք երեւի այլ կերպ կվարվեինք: Բայց նրանք այդպես էին վարվում, որովհետեւ տեսնում էին Աստծուն: «Իսկ մենք ինչպե՞ս կարող ենք տեսնել Աստծուն,- երեւի կհարցնեք դուք,- որպեսզի կարողանանք սրբերի պես լինել»: Քրիստոս մի գեղեցիկ խոսք է ասում. «Եթե չլինեք ինչպես մանուկներ...»: Գուցե մեր այդպիսի մտածելակերպի պատճառն այն է, որ մենք վաղուց արդեն դադարել ենք մանուկներ լինելուց: Ի՞նչ էինք երազում մենք, երբ մանուկներ էինք՝ կա՛մ դառնալ բժիշկ, որպեսզի մարդկանց փրկենք, կա՛մ օդաչու՝ երկնքի կապույտի մեջ սավառնելու համար, կա՛մ հեքիաթների արքայադստերը փրկող արքայազն եւ կա՛մ էլ արքայազնին սպասող հեքիաթային արքայադուստր: Մի ժամանակ մենք աշխարհին նայում էինք անմեղ, սիրով եւ հույսով լի, անկեղծ եւ պարզ ու վճիտ աչքերով: Մինչդեռ այսօր որքան նյութական եւ ինչ-որ առումով էլ մեղավոր են դարձել մեր երազանքները: Եվ սրանով մենք կարծես թե վարակել ենք նույնիսկ մեր երեխաներին, որոնց երազանքներն այսօր առավելապես կապված են նյութական եւ դրամական ձեռքբերումների հետ: Մենք ցավով կարող ենք նկատել, որ այսօր նույնիսկ մեր մանուկները դադարել են մանուկ լինելուց: Եվ այս ամենն իմանալով՝ մենք հասկանում ենք, թե որքան ենք հեռացել ինքներս մեզանից: Հետեւաբար մենք պետք է վերադառնանք դեպի մեզ, որպեսզի տեսնենք Աստծուն:

### ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՅԵՆԻՆ

Մեզ համար խրատական է Կայենի եւ Աբելի պատմությունը: Աստված ընդունեց Աբելի ընծան, որովհետեւ նա իր ունեցած ամենալավն էր ընծայել, մինչդեռ Կայենը տվել էր խոտանը, այն, ինչն իրեն քիչ էր պետք: Ցավոք, մենք հաճախ այսպես ենք Աստծուն ընծայում մեր սրտերը կամ էլ ժամանակը: Մեր ողջ ժամանակը տրամադրում ենք մեր մարմնի խնդիրները լուծելուն կամ մարմնի հանգիստը կազմակերպելուն եւ Աստծուն հիշում կամ եկեղեցի ենք այցելում այն ժամանակ, երբ այլեւս երկրային այլ կարեւոր գործեր չենք ունենում: Իսկ ե՞րբ ենք Աստվածաշունչ ընթերցում: Մեր ժամանակի զգալի մասն անցկացնում ենք հեռուստացույցից թմրեցնող հաճույք ստանալով, անտեղի խոսակցություններով եւ Աստվածաշունչ ենք ընթերցում այն ժամանակ, երբ ձանձրանում ենք մյուս բաներից: Եվ Սուրբ Գիրք ընթերցում ենք ամիսը մեկ կամ երկու անգամ կամ ընդհանրապես չենք ընթերցում: Եվ ինքներս էլ չենք նկատում, որ սկսում ենք նմանվել Կայենին, որովհետեւ Աստծուն ընծայում ենք այն, ինչը խոտան է եւ մեզ այլեւս պետք չէ: Սա ապացուցում է, որ Աստված մեզ համար երկրորդական կամ երրորդական մի անձ է, եւ առաջնայինը մեզ համար մեր երկրային գործերն են կամ էլ մեր մարմնի հոգսերը: Մինչդեռ եթե վեր բարձրացնենք մեր մտքերն ու սրտերը, կզգանք, թե ինչպես է Սուրբ Հոգին գործում որպես հուր՝ ջերմացնելով մեր սրտերը Աստծո հանդեպ եւ, որպես աղավնի, մեր սրտից հեռացնելով թշնամության զգացումը՝ երանելի խաղաղություն է պարգեւում մեր հոգիներին:

### ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՎԱԾՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղերից մեկում, երբ եկեղեցու սպասավորը քարոզում էր աստվածային ճշմարտությունները՝ խոսելով Աստծո հանդեպ սիրո եւ աղոթքի անհրաժեշտության մասին, մի ծեր տատիկ, բողոքելով ասաց. «Ինչ է, որ եկեղեցու մեջ կանգնեմ ու Աստված, Աստված կանչեմ, Աստված ինձ հա՞ց պիտի տա, պիտի նորից դատարկ դուրս գամ»: Որքա՜ն հակառակ է նման մտածելակերպը այն սրբերի կյանքին, որոնք պատրաստակամությամբ նեղություններ են կրել ու նահատակվել հանուն Քրիստոսի: Մեր եկեղեցում հիշատակվող սրբերից Եվստաթեոսը քրիստոնյա դառնալուց որոշ ժամանակ անց սնանկացավ, կորցրեց ընտանիքը, Նեքտարինեն չարչարանքների ենթարկվեց եւ սպանվեց, նույնպես եւ Դավիթ Դվնեցին խաչվեց եւ նահատակվեց: Սակայն նրանցից որեւէ մեկի մտքով անգամ չէր անցնում իրենց նեղությունների ժամանակ ուրանալ Քրիստոսին: Մինչդեռ ի՜նչ է դարձել մեր ժամանակների մարդու մտածելակերպը. Աստված նրան անպայման պիտի հաց տա: Մի՞թե այսպիսի շահախնդրությամբ ենք մենք սիրում մեր ծնողներին կամ երեխաներին, քույրերին կամ եղբայրներին, իհարկե, ոչ: Ուրեմն որքան առավել եւս ամոթ է մեզ համար նման չափանիշներով չափել մեր զգացմունքներն ու հավատարմությունն առ Աստված:



### ԴԱՏԱՍՏԱՆ

Մենք բոլորս էլ մեղքեր ենք գործում: Աշխարհում բազում մարդիկ խաբում են, գողանում, սպանում, շնանում: Մարդ կա, որ խաբում է վախից, մարդ էլ կա՝ չարությունից, մեկը սպանում է վրեժխնդրությունից դրդված, մյուսն էլ՝ ակամա: Օրինակ՝ այսօր շատ տարածված երեւույթ է այն, որ բազում կանայք սպանում են իրենց դեռ չծնված երեխաներին՝ որոշ հոգսերից ազատվելու համար, որոնք չափազանց մանր ու չնչին են մարդկային կյանքի համեմատությամբ: Մենք մարդկանց դատում ենք երկու ձեւով:

Շարունակությունը՝ էջ 4

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ



Սկիզբը՝ թիվ 17-18

Լեռ Կամսարն իր «զտումից» հետո է դեմ արտահայտվել ամբողջ հանձնաժողովին, որովհետեւ նրանցից իր սպասած արդարամտությունը չէր իրականացել: Լինելով ուղղամիտ մարդ ու գրող՝ նա չի էլ կարծել, թե դա պետական մարմնի ստեղծած հանձնաժողով է՝ որոշակի հանձնարարական կատարելու համար, եւ հանձնաժողովի անդամների անձնական կարծիքը որեւէ արժեք չունի: Այնքան է բնական ու անկեղծ Լեռ Կամսարն իր զայրույթի մեջ, որ հանձնաժողովի անդամների դեմ նրա բողոքից երեւում է, որ այդ մարդիկ հնարավոր ամեն ինչ արել են վիճակը մեղմացնելու համար եւ ավելին չէին կարող անել:

Լեռ Կամսարը մասնավորապես բողոքում է առաջին երկուսից՝ Սիմակից ու Չարենցից. «Աղամի ժամանակներից հայտնի է, որ մեղադրյալը բեմ հանելն առաջ հարց կուտան անոր՝ դատարանի կազմի դեմ առարկություն ունի՞ս: Սակայն տարրական այս պահանջը չկիրառվեց իմ՝ այնքան դատավարության նմանվող զտման ժամանակ»* *(Այսուհետեւ (*) աստղանիշով մեջբերումները կատարվում են Լեռ Կամսարի ձեռագրերից նրա թոռնուհու՝ Վանուհի Թովմասյանի ձեռքով անմիջաբար կատարված մեքենագրություններից, որոնց որոշ օրինակներ ժամանակին նա սիրով տրամադրել է մեզ: Հնարավոր ենք համարում նաեւ բնագրից որոշ ոչ էական մասնակի շեղումներ ու վրիպումներ, որովհետեւ մենք ձեռագրերն անձամբ ուսումնասիրելու հնարավորություն չենք ունեցել:*

*Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Լեռ Կամսարի Աշոտ որդուն ու նրա դստերը՝ Վ. Թովմասյանին՝ պահապան հրեշտակի պես այդ ձեռագրերը կորստից փրկելու, համակարգելու եւ դրանց հրատարակման ուղղությամբ ներդրած ազնիվ ու հերոսական ջանքերի համար - Ս. Մ.),-* գրել է նա: Բողոքում է Սիմակից՝ մի նշանավոր մանկավարժից, որն «ամբողջ օրը դասագրքերում սոցիալիզմ էր շինում մանուկների համար», եւ եթե իրեն արտոնվեր, ինքը հեշտությամբ կարող էր ցույց տալ, որ «Սիմակին քարոզած սոցիալիստական շինարարությունը իսկական սոցիալիստական քանդարարություն է»*, որովհետեւ նրա դասագրքից են իր եւ մյուս դպրոցահասակ հայ երեխաները սովորել՝

*Տրակտորը գյուղ մտավ,*
*Փայտե արորը կորավ...*

Խորապես դժգոհում է Չարենցից, որովհետեւ վերջինս դիտմամբ ուշ էր եկել «զտման» արարողությանը, որ ինքը ներկա չլինի այդ հրաշափառ խայտառակությանը եւ լավ ճանաչելով Լեռ Կամսարի բնավորությունը՝ ջանացել է կանխել նրան, զրկել ինքնապաշտպանության հնարավորությունից եւ խոսելու առիթ չտալ նրան, որովհետեւ իր շիտակությամբ ու բորբոքուն բնավորությամբ, իր անզիջող, հանդուգն խոսքով նա կարող էր էլ ավելի ծանրացնել իր առանց այն էլ ծանր դրությունը, եւ հետո անկարելի պիտի լիներ ծանր պատժից նրան փրկելը:

Չարենցի այս մտավախությունն ու արարքը չհասկանալով՝ ահա ինչ է գրում Լեռ Կամսարն անկեղծորեն.

«Իմ երկրորդ դատավոր Եղիշե Չարենցն այսպես սկսեց իր ելույթը.

- Ուշ գալով՝ թեեւ ես չլսեցի՝ ինչ է ասել Լեռ Կամսարը, բայց հայտնի է, թե ինչ ասած պիտի լինի: Եվ երկրորդ՝ ես առաջարկում եմ նրան զրկել վերջին խոսքի իրավունքից, որովհետեւ հայտնի է, թե ինչ պիտի խոսի»*:

Նույն այս նամակում Լեռ Կամսարը, դարձյալ անկեղծորեն, գրել է իր եւ Չարենցի երբեմնի մտերմության մասին, որից երեւում է՝ Չարենցն իրոք բարձր է գնահատել երգիծաբանի տաղանդը, անգամ նրան համեմատել է Սերվանտեսի հետ ու վստանգավոր ժամանակներում նրան առաջարկել «Դոն Քիշոտի» նման մի վեպ գրել հայ խմբապետների կյանքից: Այս առիթով էլ ասում է. «Այն ժամանակ Չարենցը Սերվանտեսի տաղանդն էր վերագրում ինձ. Սերվանտես, որի կոշիկի փոկերն իսկ արձակելու արժանի չէի ես»*:

Լեռ Կամսարը կարծես քիչ թե շատ գոհ է Բակունցի վերաբերմունքից. «Միակն իմ դատավորներից, որ իրեն քիչ թե շատ կոռեկտ պահեց, էր Ակսել Բակունցը»*:

Միակուսակցական բռնատիրական պետություն, գաղափարական պարտադրանքներ, այլախոհության բացառում... Այնպես որ, Լեռ Կամսարի «դատավորների» կողմից որեւէ այլ դիրքորոշում իսկապես բացառված էր: Այս պայմաններում անգամ, ճիշտ Չարենցի նման, Բակունցն էլ է փորձել մեղմել իրավիճակը, սակայն, ինչպես երեւում է նույն բողոքից, Բակունցն էլ «զտվող» գրողին ներկայացրել է նրա համար «անընդունելի» գաղափարական պահանջներ, որոնցից իր դժգոհությունը վերջինս դարձյալ արտահայտում է անկեղծորեն ու դառնությամբ. «Բայց սա էլ (այսինքն՝ Բակունցը - Ս. Մ.) զույգ ոտքը մեկ կոշիկի մեջ խոթած եւ օձիքս պինդ բռնած՝ զիս կպարտադրեր, որ ես անպայման աշխարհայացք ունենամ: Հարց կուտամ Ակսելին՝ կարո՞ղ է մարդ ունենալ աշխարհայացք՝ առանց իմանալու ինչ է աշխարհի: Օրինակ՝ ի՞նչ աշխարհայացք կա անոր այն գրվածքներու մեջ, ուր արջերը թոնթորալով մաճ կուգան օրնիբուն: Չարենցն ունի՞ աշխարհայացք. անշուշտ՝ ոչ. ինչ հաջողությամբ ան կրցավ 12 տարի առաջ ամբոխները խելագարեցնել, նույն հաջողությամբ հիմա չի կրնար անոնց խելքի բերել եւ լծել սոցիալիստական շինարարությանը...» (նկատի ուներ 12 տարի առաջ՝ 1918-ին գրած եւ 1919-ին Չարենցի հրատարակած «Ամբոխները խելագարված» պոեմը):



**Լեռ Կամսարի տունը Երեւանում**

Այո՛, դառնացած էր գրողը խորհրդային իրականությունից, իր գրչընկերներից, որոնք գուցե եւ ճիշտ իր պես էին մտածում, բայց իր պես չէին արտահայտվում, դառնության մեջ չի էլ նկատել, որ փրկությունն այդ ընկերներից չէր կախված, եւ վերջինները իրեն փրկելու կամ վիճակն էլ ավելի չծանրացնելու հանդուգն փորձեր են անում: Չի ընդունում նրանց ասածն ու արածը եւ հանդուգն համառությամբ պնդում է, թե ինքն ապրել է չորս բռնապետությունների օրոք, քննադատել է թուրքական, ցարական, դաշնակցական բռնատիրությունները, իսկ բոլշեւիկյան բռնատիրությունը նույնիսկ թուրքականից էլ է վատ:

«Երբ բեմ ելնելուս, դեռ բերանս չբացած, իմ «դաստիարակիս» կոպիտ վերաբերմունքից հասկցա, որ դատավճիռս տրված է արդեն նախապես, եւ ինձ կանչել են, որ համապատասխան «հանցանքներ» գործեմ միայն, այդ տմարդի, միջնադարին միայն հատուկ տեսարանի հանդեպ կծկվեցի, տնկեցի փշերս ցասումով, այնպես, ինչպես ոզնին է դիրքավորվում օձի հանդիման:

*Այն ժամանակ, երբ ողջ Սովետական Միությունում մարդիկ անգամ չէին համարձակվում տնքալ՝ վախենալով, որ կառավարությունը այդ կարող է դժգոհության նշան համարել իր ռեժիմի դեմ՝ ես դուրս եկա ու հայտարարեցի.*

*- Թուրք կառավարությունը լավ է ձեր կառավարությունից:*

*Իսկ հայտնի է, որ համաշխարհային քարտեզի վրա Թուրքիան ամենակեղտոտ կառավարությունն է»* (տե՛ս **Լեռ Կամսար**, Կարմիր օրեր, էջ 10, ընդգծ. մերն են – Ս. Մ.):

Ահա թե ի՛նչն էին ջանում կանխել Չարենցն ու Բակունցը եւ ինչից էին ուզում «փրկել» նրան ստեղծված բարդ իրավիճակում: Այս դեպքում Լեռ Կամսարն էր միայնակ հայտնվել գրական մարդկանց ձեռքով իրականացվող պետական դատաստանի առաջ. մի փոքր անց «դատողներն էին դատվելու»:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ էջ 3*

Առաջինը կշտամբելն է կամ պախարակելը, որով մենք ցույց ենք տալիս, որ համաձայն չենք նրանց այս կամ այն արարքի հետ եւ ցանկանում ենք, որ նրանք այլեւս այդպես չվարվեն եւ ուղղվեն: Երկրորդը որեւէ մեկին պիտակ կամ որակում կպցնելն է: Օրինակ՝ այլ է երբ մեկին ասում ենք՝ դու ինչ-որ բան ես գողացել, եւ այլ է, երբ ասում ենք՝ դու գող ես: Եկեղեցական հեղինակներից մեկն իրավամբ ասում է, որ մենք էլ Վերջին Դատաստանի ժամանակ դատվելիս այդպիսի նրբություն ենք ցանկանալու տեսնել: Գուցե Դատաստանի ժամանակ մենք կանգնենք Աստծո առջեւ եւ ասենք. «Ով Տեր Աստված, այնպես է եղել, որ ես ստել եմ, բայց ես խաբեբա չեմ, գողացել եմ, բայց գող չեմ, շնացել եմ, բայց անառակ չեմ»: Մեզ մի զարմանահրաշ հնարավորություն է տրված. ինքներս կարող ենք որոշել, թե հետագայում ինչպես ենք դատվելու: Քրիստոսն ասում է, որ ինչպես դատում ենք ուրիշներին, այնպես էլ դատվելու ենք, ինչ չափով որ չափում ենք, այն չափով էլ չափվելու ենք: Եվ եթե մենք ցանկանում ենք, որ Վերջին Դատաստանի ժամանակ մեզ դատեն ոչ թե խիստ արդարությամբ, այլ սիրով ու ներողամտությամբ, ապա ինքներս պետք է այդպես դատենք ուրիշներին: Թող որ այնպես ապրենք, որ մեր սրտերից, մանավանդ դատելու ժամանակ, անպակաս լինեն սերն ու ներողամտությունը, որպեսզի ինքներս հատկապես այդ վճռական ու ճակատագրական պահին կարողանանք սեր եւ ներողամտություն գտնել:

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏԵՎՈՐԴԸ

Մենք հաճախ ենք ձգտում բարօրության այս կյանքում: Սակայն ի՞նչ օգուտ կունենա մարդ,- ասում է Քրիստոս,- եթե այս ամբողջ աշխարհը շահի եւ իր հոգին կորցնի: Մարդկային հոգին ամենաթանկ բանն է եւ այն փրկելու համար պետք է հետեւել Քրիստոսին նույնիսկ նեղությունների եւ չարչարանքների մեջ:

## ԳԱՅԹԱԿՂԻՉ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ոչ մի դարաշրջան քրիստոնեական հոգու համար այնքան գայթակղիչ եւ վտանգավոր չի եղել, որքան մեր դարաշրջանը: Գուցե եղել է ավելի տանջալի եւ ավելի դժվար ժամանակաշրջան, սակայն գայթակղության առումով չեն եղել այսքան վտանգավոր ժամանակներ: Գիտական եւ հատկապես տեխնիկական նվաճումները, որոնք միտվել են մարդկային կյանքը հեշտացնելուն, իրականում ավելի շատ մարդկանց իրենցից կախվածության մեջ են պահում: Այսօրվա շատ գովազդներ, նկարներ կամ արվեստի գործեր իրենց մեջ թաքնված հատուկ ենթատեքստ ունեն, որոնք ազդում են մարդկային գիտակցության վրա: Օրինակ՝ որեւէ հագուստ գովազդող իսկա պաստառն իր գայթակղիչ նկարով մարդուն կարծես Ոդիսեւսի պատմության առասպելական թռչունների պես անլսելի, բայց անընդհատ ձայնելով՝ քաշում է իր կողմը եւ ասում. «Ճնացիր, հաճույք վայելիր»: Անպարկեշտ դրվագներ ցույց տալով՝ նույնն է ասում նաեւ հեռուստացույցը՝ միեւնույն ժամանակ առաջարկելով նաեւ սպանությունների ահավոր տեսարաններ: Իսկ համակարգիչն իր ծառայություններից միայն տասը րոպեով օգտվելու տրամադրված մարդուն կարծես կախարդում է եւ նրանից ժամեր խլում՝ հոգուն առավելապես դատարկության զգացումներով համակելով: Այո, շատ դժվար էր մարտիրոսների համար, կողմնորոշվելն էր հեշտ. կա՛մ կուռքերին պիտի երկրպագես, կա՛մ Աստծուն: Մինչդեռ այժմ, երբ աշխարհի մեծ մասը քրիստոնեացել է, մարդը չի կարողանում կողմնորոշվել. հեղհեղուկ են դարձել բարու եւ չարի սահմանները, դժվար է որոշել, թե որտեղ է վերջանում մամոնայի պաշտամունքը եւ որտեղ սկսվում Աստծո պաշտամունքը: Ասում են, որ «Մենք առաջինն ենք ընդունել քրիստոնեությունը». հայերիս միայն սրտամոտ եւ դուրալի է «առաջին» բառը: Իրոք, մեզանից շատերը հաճախ անունով քրիստոնյա, բայց էությամբ հեթանոս են: Շատերս սիրում ենք հպարտանալ միայն անցյալով՝ մոռանալով, որ մեր ներկան հաճախ միայն անցյալի ավերակն է: Մեր օրերի համար որքան դիպուկ է ասված Հայտնության գրքում. «Գիտեմ քո գործերը, դու, որ ո՛չ սառն ես եւ ո՛չ տաք»: Ոչ սառը նշանակում է, որ մարդը քրիստոնյա է, ոչ տաքը նշանակում է, որ մարդը, Քրիստոսի Եկեղեցու անդամ լինելով, իր ապրած կյանքի պատճառով զուրկ է աստվածային շնորհից: Լսենք, թե ապա ինչ է ասում Քրիստոսը. «Երանի դու սառն լինեիր եւ կամ տաք. իսկ դու գաղջ ես՝ ո՛չ տաք, ո՛չ էլ սառն. հիմա պիտի փսխեմ քեզ իմ բերանից, չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ եւ աղքատ, մերկ եւ կույր»: Սա նշանակում է, որ միայն անունով են քրիստոնյա, իսկ իրականում շատ հեռու են Քրիստոսի հաստատած Եկեղեցուց կամ էլ շատ սահմանափակ գիտելիքներով, եւ միայն մոմ վառելով կարծում ենք՝ ապրեցինք մեր քրիստոնեական կյանքը: Զարմանալին կամ ահավորն այն է, որ մարդիկ նույնիսկ չեն էլ անհանգստանում դրա համար: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, որ երկու մկրտություն կա՝ մեկը ջրով եւ Սուրբ Հոգով, իսկ մյուսը՝ նահատակությամբ: Սրանցից որեւէ մեկի բացակայության դեպքում մարդը չի կարող փրկվել: Նահատակությունը միայն տեսանելի արյուն թափելով թշնամուն հաղթելը չէ, այլ նաեւ ներքին պատերազմ մղելով՝ սատանային հաղթելը: Ուրեմն մի կողմ դնենք մեր գաղջությունը եւ ներքին պատերազմ մղելով՝ արժանապատվությամբ նահատակվենք՝ արժանանալով Երկնքի արքայության:



*Շարունակելի*

***Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ***

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## Միջին բրոնզի դարի՝ Ք. ա. 25-16 դդ. արվեստը

*Սկիզբը՝ 2006-ի թիվ 15-18*

Հայաստանի՝ միջին բրոնզի դարի մշակույթը բնորոշվում է վիթխարի դամբանաբլուրներով, որոնք պարունակում են շքեղ գունազարդ խեցանոթներ, ոսկյա եւ արծաթյա ոսկերչական արվեստի բացառիկ նմուշներ:

Յուրատեսակ, լոկ Հայկական լեռնաշխարհին բնորոշ մենհիրկոթողներ են ժողովրդի՝ վիշապներ անվանած միակտոր, մեծ քարերից կերտված արձանները: Հնագույն քանդակագործության այդ կոթողները, տեղադրված բնական եւ արհեստական ջրավազանների ու աղբյուրների ակունքների մոտ, անկասկած հանդիսացել են պաշտամունքային հուշարձաններ եւ խորհրդանշել են տարերքի անսանձ ուժեր, բնության զարթոնք, պտղաբերություն, առատություն: Ըստ Մ. Աբեղյանի՝ վիշապները նվիրվել են հայկական պանթեոնի սիրո, պտղաբերության եւ ջրերի աստվածուհուն՝ Աստղիկ դիցուհուն: Գ. Ղափանցյանի կարծիքով՝ դրանք մարմնավորել են Արա Գեղեցիկին:



Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանների բարձրադիր վայրերում (Գեղամա լեռներ, Արագած, Ջավախք, Սյունյաց աշխարհ), ջրային ավազանների ափերին, ոռոգման համակարգերի կամ հորդառատ աղբյուրների ակունքներին Ք. ա. 5-2-րդ հազարամյակներում կանգնեցվում էին ջրի եւ պտղաբերության արական սկիզբը խորհրդանշող աստվածության արձաններ: Դրանք վիթխարի՝ մինչեւ 5 մ բարձրությամբ եւ 1 մ տրամագծով, միակտոր բազալտից կերտված ձկնակերպ կամ սյունաձեւ քանդակներ են, որոնց ողորկ հարդարված մակերեսներին պատկերված են զոհաբերված ցուլերի, ջրային թռչունների, օձերի եւ այլ ռելիեֆ քանդակներ: Ժողովուրդն այս կոթողներն անվանել է վիշապներ՝ հեքիաթներում եւ ժողովրդական պատումներում բազմիցս հիշատակված առասպելական կենդանու անունով: Կոր քանդակագործության այս վաղագույն նմուշները հատուկ են լոկ Հայկական լեռնաշխարհի մշակույթին:

Մոխրագույն կամ կարմրավուն բազալտ քարից հղկման տեխնիկայով կերտված տարածական այս կոթողները ներկայացված են երկու տիպով: Վաղագույն նմուշներն ունեն ձկնակերպ իրան եւ մեծագլուխ լոքո ձկան կամ գետային կարմրախայտին բնորոշ գլուխ՝ ռելիեֆ աչքերով, խռիկներով, բերանով եւ լողակներով: Այս կոթողների փորի վրա հաճախ պատկերված են զոհաբերված ցլեր. գլուխը՝ ոճավորված եղջյուրներով, մորթին՝ վերջույթներով: Որպես կանոն՝ ցլերի բերանից ջրի շիթեր են հոսում, ինչը շեշտում է վիշապների կապը ջրի պտղաբերող ուժի հետ, որի պարտադիր պայմանն է ցլի զոհաբերությունը: Ավելի ուշ վիշապները կերտում էին մենհիրների երկու օղակներով: Շատ ավելի ուշ են ձեւավորված Շամիրամի կրոմլեխները, որոնք կառուցված են կողքի վրա դրված տուֆե՝ մինչեւ 4 մ երկարությամբ եւ 1-1.5 մ բարձրությամբ սալաքարերից: Սրանց ճակատային մասերը զարդարված են ռազմի եւ որսի տեսարաններ պատկերող բարձրաքանդակներով:

Խիստ փոքրաթիվ են միջին բրոնզի դարի մանր քանդակագործության նմուշները: Լճաշենի N 8 դամբարանից հայտնաբերվել է ջրային թռչունների բրձակավե ինն արձանիկ: Չնայած



քառակող կամ բազմանիստ, երբեմն դեպի վեր լայնացող կոթողների տեսքով, որոնց գլխի վրա «գցված» են զոհաբերված ցլերի մորթիներ՝ գլուխը եւ առջեւի վերջույթները մի կողմում, ետեւի վերջույթները՝ մյուս կողմում: Այս կոթողների վրա հանդիպում են նաեւ թռչունների բարձրաքանդակներ: Երկու տիպի կոթողներն էլ ժամանակին կանգնեցված են եղել ուղղաձիգ դիրքով (բարձրությունը՝ մինչեւ 5 մ, լայնքը՝ 1 մ), նախատեսված են եղել դիտարկման բոլոր կողմերից եւ խորհրդանշել են ջրի պտղաբերության արական սկիզբ: Մինչ այժմ հայտնաբերվել են մի քանի տասնյակ վիշապներ Գեղամա լեռներում (Գյոլ-յուրտ, Վանքի լիճ), Սեւանա լճի հյուսիսարեւելյան ափին (Արտանիշի ծոցի մոտ), Արագած լեռան հարավային լանջին (Սեւ կամ Քարե լճի մոտ ու հնագույն ոռոգման ցանցի հանգուցային կետերում), Ախալքալաքում (գյուղ Գանձա, Փարվանա լճի ափին), Խրամ գետի մոտ, Սյունիքում (գյուղ Հարժիս) եւ այլն:

Ք. ա. 2-րդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում լայն տարածում են ստանում մեգալիթյան կոթողները՝ մենհիրները, դոլմենները, կրոմլեխները (սալաշեն տուն), ինչպես նաեւ ֆալլաձեւ եւ անտրոպոմորֆ արձանները: Զորաց քարերի կրոմլեխները կազմված են ուղղաձիգ դրված 1.5-2.5 մ բարձրությամբ միակտոր քարե հարյուրավոր մենհիրներից, որոնց գագաթային մասում միջանցիկ անցքեր են փորված: Որոշ հետազոտողներ այս հուշարձանը մեկնում են որպես հնագույն աստղադիտարան՝ ուշադրություն հրավիրելով նաեւ այն փաստի վրա, որ նրա մերձակա Քարահունջ գյուղի անունը իբր թե բացարձակ նմանություն ունի հռչակավոր Սթոունհենջի անվան հետ: Այստեղ՝ կենտրոնական մասում, առաջնորդի դոլմեն-դամբարանն է՝ շրջապատված ցից դրված խիստ ոճավորմանը, դրանք հակիրճ ու պարզ կերտվածքով ներկայացնում են լողացող թռչուններին բնորոշ ձեւերը՝ կլորիկ, ստորին մասում հարթ մարմին, երկար ձգված վիզ եւ փոքր գլուխ (կարապ): Բոլոր արձանիկների վզերը եւ գլուխները ներկված են վարդագույն կամ կարմիր, մարմինները՝ սպիտակ: Թռչուններից ութը ունեն ծալած թեւեր եւ կարծես վեհապանծ լողում են ջրի մակերեսին, իսկ իններորդը քանդակված է բաց թեւերով, կարծես լճի հայելու վրա իջնելու եւ վերջին թեւաբախությունն անելու պահին լինի:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կարմիր վանքի (Նախիջեւան) դամբարաններից մեկում հայտնաբերված մորուքավոր տղամարդու արձանիկը՝ դեմքի եւ հագուստի մանրամասն կերպավորմամբ: Գանգուր մազերով գլուխը զարդարում է սրածայր գլխարկը: Հագած է երկարափեշ կապա, ոտքերին՝ երկարաճիտ կոշիկներ, մեջքին՝ գոտի: Արձանիկը ներկված է սպիտակ, կոշիկները՝ կարմիր, հագուստը զարդարված է սեւ եւ շագանակագույն գծերով: Գլխարկը, գոտին եւ մասնավորապես կարմիր գույնի երկարաճիտ կոշիկները մատնանշում են պատկերվածի խիստ բարձր սոցիալական դիրքը: Այստեղ քանդակված է ոչ թե դիցաբանական հերոս կամ որեւէ աստվածություն, այլ պատմական կոնկրետ անձնավորություն, թերեւս, տեղի արքան կամ իշխանը: Այս արձանիկի կատարման տեխնիկան եւ ձեւավորման սկզբունքները զգալի առաջընթաց են արձանագրում համեմատությամբ վաղ բրոնզի դարի մանր քանդակագործության: Ցավոք, այս արձանիկը, պեղումների ցածր մակարդակի հետեւանքով, խառնվել է այլ դամբարաններից հայտնաբերված գտածոների հետ, որի հետեւանքով միջին բրոնզի դարով թվագրվում է թեականորեն:

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ

### (1166-1173)

*Սկիզբը՝ էջ 3*

Շնորհալին արգելում է առանց քահանայական հագուստի պատարագ մատուցել կամ Ավետարան կարդալ, ձեռքը խաչ վերցնել կամ որեւէ սուրբ իրի մոտենալ: Նա չի թույլատրում պատարագը մատուցել առանց սաղմոսների եւ աղոթքների: Մկրտությունն էլ միայն ստիպողական դեպքերում «յետ հաց ուտելոյ» կատարելը ներում է եւ զգուշացնում այլազգիների զավակները մկրտելուց:

Շնորհալին արգելում է գաղտնի պսակադրությունը, ինչպես նաեւ կնաթողների, այրաթողների, առեւանգողների եւ երեխաների պսակը: Տղաների համար նվազագույն տարիք է պահանջում 15 տարին եւ աղջիկների համար՝ 12-ը: Բռնի ամուսնությունները նա հայտարարում է ոչ հաստատ եւ լուծանելի: Ամուսնությունն ազգակիցների միջեւ մինչեւ երկու կողմից չորրորդ սերունդն արգելում է: Այլ խոսքով՝ խնդիրը վերաբերում է ազգականների միջեւ ամուսնությունը միայն յոթ պորտ հետո թույլատրելուն: Պսակադրության համար ժամանակ է սահմանում առավոտից մինչեւ ճաշի ժամը, որպեսզի կերած եւ հարբած չլինեն: Կարգադրում է անառակ կանանց եւ տղամարդկանց եկեղեցի չընդունել, գուսանական երգերը դադարեցնել մինչեւ եկեղեցուց դուրս գալը: Այլ խոսքով՝ եկեղեցուց դուրս պսակադրություն կատարել չէր կարելի: Չէր կարելի պսակ անել Բուն բարեկենդանի օրվանից մինչեւ պահոց շաբաթվա ավարտը, ինչպես նաեւ տարվա յուրաքանչյուր կյուրակես: Հարսանիքի գնացած քահանաներին թույլատրում էր մնալ այնտեղ մինչեւ երրորդ բաժակը խմելը: Քահանայից պահանջվում էր եպիսկոպոսի դեմ չըմբոստանալ, այլ քրիստոնյաների կամ այլազգիների դատաստանին չդիմել, աշխարհիկ կամ պետական գործակալություն չվարել, ձիավարժությամբ եւ գինավարժությամբ չզբաղվել, մեկ այլ քահանայի կամ եպիսկոպոսի կողմից որոշյալը չլուծարել:



Թղթի երրորդ մասը վերաբերում է աշխարհականներին՝ իշխաններին, զինվորական դասին, քաղաքացիներին, երկրագործներին եւ ամբողջ ժողովրդին, ինչպես նաեւ կանանց դասին: Իշխան ասելով՝ հեղինակը հասկանում է տիրույթներ ունեցող եւ սակավ կամ բազում անձանց ու զորքերի իշխող մարդկանց: Նրանց հրաման է տրվում չանիրավել, չզրկել, չար գործակալներ պաշտոնի չդնել, անօրինական դատաստան չընդունել, այրիներին ու աղքատներին պաշտպանել, մարդկանց անասունի պես չաշխատեցնել, աշխատողի վարձքը չկտրել, բոլորին հավասար աչքով նայել, մարմնավորի համար հոգեւորը չմոռանալ, հետեւել գթության եւ ողորմության: Այդ խնդրում նա դժվարություն է համարում ոմանց փաստարկը, թե առանց զրկելու եւ հափշտակելու ինչպես կարող են իշխանությունը հաստատուն պահել: Ըստ որում, ըստ Շնորհալու, շատերը հակվում են չարության՝ տեսնելով, թե ինչպես շատերն անօրեն են ինքի տեր դառնում, եւ միայն սակավները՝ իրավամբ: Խրատ է տրվում՝ պահքերը չլուծել ձկով եւ գինով, սուտ եւ հայհոյիչ խոսքեր չօգտագործել, զինվորների ռոճիկը չխարդախել, կեղծ երդումներ չտալ, անգամ այլազգիների նկատմամբ երդումը հաստատուն պահել, զայրացած դատ չանել, քինու եւ վրեժի ոգով որոշումներ չկայացնել: Զինվորականներին կարգադրում է հավատարիմ լինել թե՛ իրենց քրիստոնյա եւ թե՛ այլազգի տերերին, ժողովրդին չնեղացնել, իրենց հանձնարարված գործերում զեղծումներ թույլ չտալ եւ իրենց ռոճիկից ավելի ոչինչ չյուրացնել: Քաղաքացիներին հանձնարարվում է արդար գործել, ռամիկին չխաբել, չափերն ու կշիռները չխախտել, շինականներին չանարգել, վաշխից զգուշանալ եւ միայն փոխ տվածը պահանջել: Երկրագործներին եւ ռռամիկ ժողովրդին պատվիրում է հոգեւոր արժեքները չմոռանալ, հարբեցողությամբ, պոռնկությամբ չզբաղվել, չարագործությունից հեռու մնալ, չհայհոյել, զավակներին բարվոք կրթության տալ, իրար սիրել եւ կարոտյալներին ողորմություն տալ: Կանանց պատվիրում է պարկեշտ եւ բարեձեւ լինել, երիտասարդներին չգայթակղեցնել եւ կախարդությունից հեռու մնալ: Վերջաբանում ասվում է, որ շատ հարցերի մասին, որ ինքը չի խոսել, կլրացնեն եպիսկոպոսները եւ քահանաները:

*Շարունակելի*

**ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ



*Սկիզբը՝ էջ 4*

Պարզ է, որ «զտումն» անխուսափելիորեն պիտի կայանար՝ ինչքան էլ Լեռ Կամսարը խնդրեր, որ իրեն թույլ տային Հայաստանում ապրել գյուղատնտեսության վնասատուների դեմ կռվող ու նրանց ոչնչացնող օգտակար թռչնի՝ «աբագիլի իրավունքով»:

Այսպես թե այնպես, Լեռ Կամսարը ճաշակելու էր խորհրդային երկրի բանտաքարորային «վայելքները»:

Եվ դրա համար պատրվակների, առիթների ու պատճառների պակասություն բնավ չկար:

Ահա դրանցից մեկով էլ 1935-ի աշնանը, տունը խուզարկելով եւ ձեռագրերը բռնագրավելով, կալանավորում են գրողին՝ գործին կցելով նրա «Պլենար նիստ» (այս պիեսի մասին առայժմ հայտնի միակ վկայությունն է սա. ըստ երեւույթին՝ բռնագրավված մյուս ձեռագրերի հետ միասին ոչնչացվել է) խորագրով պիեսի ռուսերեն թարգմանությունը: Վկայություններ են պահպանվել, որ Մոսկվայից հատուկ Լեռ Կամսարին խստագույնս պատժելու նպատակով հրավիրված ռուս դատավորն այդ պիեսից քաղվածքներ կարդալիս հազիվ էր բաշկինակով զսպում ծիծաղը, իսկ երբ մի պահ հսկող աչքերից ազատ



**Տունը, որտեղ ապրել է Լեռ Կամսարը**

են մնում երկուսով, մտերմաբար ասում է.

«Հիանալի ես գրում. դու պիտի ուրիշ ժամանակներում ծնված լինեիր: Ցավում եմ, բայց նվազագույն պատիժ հարկադրված եմ տալ» (տե՛ս **Լեռ Կամսար**, Կարմիր օրեր, էջ 11):

Տրվում է երեք տարվա ազատազրկում՝ չնայած մեղադրվում էր ֆաշիզմի, միջազգային իմպերիալիզմի գործակալ լինելու եւ Ստալինի դեմ անձամբ մահափործ կազմակերպելու մեջ:

Նույն մեղադրանքներով ուրիշներին գնդակահարում էին:

Աղասի Խանջյանի սպանությունից հետո, պատիժը մեղմ համարելով, Լեռ Կամսարին Երեւանի բանտից աքսորում են Վորկուտա՝ ցրտի բեւեռ՝ գետանավեր բեռնաթափելու: Եռամյա այս տաժանակրությունից հետո նա վերադառնում է, բայց զրկվում է նաեւ Երեւանում ապրելու իրավունքից, աքսոր է ուղարկվում Բասարգեչար (այժմ՝ Վարդենիս) եւ տասնյոթ տարի էլ ընտանիքից ու գրական միջավայրից հեռու՝ զբաղվում մեղվապահությամբ: Հարազատները վկայում են, որ խուզարկությունների հետեւանքով ձեռագրերի մեծ կորուստներ տեսած երգիծաբանն իր նոր գրությունները թաքցնում էր կա՛մ թռոնների բարուրի մեջ, կա՛մ մեղուների փեթակների տակ:

Լեռ Կամսարն արդարացվում է Ստալինի մահից երկու տարի հետո միայն եւ ընկնում էլ ավելի ծանր սոցիալական դրության մեջ: Անգործ էր եւ իշխանությունների համար անվստահելի. համատարած վախի եւ անվստահության մթնոլորտում բոլորը երես էին թեքում նախկին բանտարկյալից ու աքսորականից, ոչ որ աշխատանք չէր տալիս մեծ երգիծաբանին ու մեծ տառապյալին:

1954 թ. հունվարի 4-ին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի նորանշանակ առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանին ուղղված դիմումում Լ. Կամսարը նախ բացատրում է իրեն բանտարկելու եւ աքսորելու առիթը, ապա ներկայացնելով իր աննախանձելի վիճակը՝ աշխատանք խնդրում: Ահա այդ դիմումից մի հատված.

«Ես 44 տարվա հայ երգիծաբան եմ: 15 տարի միայն «Խորհրդային Հայաստանին» եմ աշխատակցել որպես ֆելիետոնիստ: 1935 թվականին որպես գրող շարքից հանվեցի, 3 տարով բանտարկվեցի ու 17 տարով քաղաքից վտարվեցի հետեւյալ պատճառով.

Երկու մարդ կանգնած խոսում էին իրար հետ. մեկը դրանցից նոր էր վերադարձել Թիֆլիսից եւ պատմում էր իր ընկերոջը այն մասին, թե ինչպես Բերիայի եւ Խանջյանի հարաբերությունները սաստիկ լարված են եւ դրանց մեջ ուժեղ պայքար է գնում:

Ես, որ պատահմամբ ներկա էի այդ խոսակցությանը՝ **միայն** լսեցի ու որպես գործից անտեղյակ՝ ոչ մի խոսք չասացի:

Հետագայում, սակայն, պարզվեց, որ իմ այն արարքը մեծ հանցանք է եղել եւ ես, թեկուզ գործից անտեղյակ՝ պետք է «հակահարված» տայի պատմողին՝ որպես ազգամիջյան ատելություն սերմանողի:

Այս գլխավոր հանցանքս զարդարվեց մի քանի երկրորդական հանցանքներով, ու ինձ ճամփու դրին ուղղիչ լագեր, ապա աքսոր:

Եվ այսպես մոտ քսան տարի՝ երբ հրատարակվեց ներման մանիֆեստը:

Թեեւ մանիֆեստը ինձ թույլ էր տալիս տուն վերադառնալ եւ խաղաղ աշխատանքի անցնել, բայց ահա սա տասն ամիս է ծեծում եմ բոլոր հիմնարկների դռները մի աշխատանք ստանալու համար՝ ինձ չի հաջողվում: Հանդիպում եմ միայն սառն անտարբեր վերաբերմունքի» (տե՛ս նույն տեղը, էջ 65-68):

1955-ին թեեւ Լեռ Կամսարն արդարացվում է, սակայն այդպես էլ նա կայուն եւ հիմնական աշխատանք չի ստանում:

Միակ պարբերականը, որ երբեմն իր էջերը տրամադրում էր Լեռ Կամսարին, «Ոզնի» երգիծաթերթն էր, որովհետեւ մյուս թերթերը «սուր ֆելիետոնի կարիք չունեին»: «Ոզնին» էլ մինչեւ մի բան էր տպում, «մորթում» էր հեղինակին:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

> «Գինին անառակության է մղում, հարբեցողությունը՝ թշնամության, եւ ով անձնատուր է լինում դրանց, խելացի չէ»
> *(Առակ. Ի 1):*

Եկեղեցու սուրբ հայրերն ու վարդապետներն ուսուցանում են, որ Աստծու ստեղծած ամեն բան բարի է: Սակայն, ինչպես Ծննդոց Գիրքն է վկայում, երբ մարդիկ չարաչար են վարվում նրանց հետ, դրանք նրանց համար տանջանքների են վերածվում, ինչպես որ հարբեցողները, գինին ոչ բարվոք գործածելով, տանջվում են նրանից: «Զգո՛ւյշ եղեք.... գուցե ձեր սրտերը ծանրանան զեխությամբ եւ հարբեցողությամբ ու աշխարհիկ հոգսերով...»,- զգուշացնում է Տերը (Ղուկ. ԻԱ 34): Սբ Պողոս առաքյալն էլ, երկրորդելով Տիրոջ խոսքը, ասում է. «Մի՛ հարբեք գինով. դրա մեջ զեխություն կա» (Եփես. Ե 18): «Գինին տրվեց որպես ընկերական սիրո միջնորդ ու տրտմության փարատիչ, իսկ հարբեցողներն այն դարձրին կռվի ու տրտմության նյութ»,- ասում է Պողոս Ադրիանուպոլսեցին, իսկ սբ Վ. Այգեկցին ավելացնում է, որ «Եթե ուրախության եւ սիրո օրերին կամ մարմնի տկարության համար չափավոր խմես, չես պատժվի: Բայց եթե շատ խմես, խելագարվես, շվայտանաս ու զեխանաս, կպատժվես Աստծու կողմից, որովհետեւ մեղքերի սկիզբ դարձավ»: Հստակ է, որ գինու չափավոր գործածությունը նույնիսկ բարերար ազդեցություն է ունենում մարդու վրա՝ տկարության դեպքում օգնելով եւ զորացնելով հիվանդներին, ինչպես եւ Պողոս առաքյալն է իր Տիմոթեոս աշակերտին գրում. «Այսուհետեւ միմիայն ջուր մի՛ խմիր, այլ մի քիչ գինի էլ խառնիր՝ քո ստամոքսի եւ հաճախակի տկարությունների պատճառով» (Ա Տիմոթ. Ե 23): Ուրեմն տեսնում ենք, որ գինին չար բան չէ, բայց նրա չարաչար գործածությունը պատճառում է մեծամեծ չարիքներ: Դժբախտաբար ոգելից խմիչքների ոչ չափավոր գործածումը հաճախ լուրջ ու դժվարբուժելի ախտի է վերածվում՝ ապականելով մարդու հոգին եւ մարմինը: Չարբեցողությունը դիվական ախտ է, մեծագույն չարիք եւ մեղք, մարդու բանականությունն ապականող թույն: Սուրբ Գրքից էլ բազմաթիվ օրինակներ գիտենք, որ շատերը կործանվեցին հարբեցողության պատճառով: «Չարբեցողությունը կորցնել է տալիս մարդու միտքը եւ մարդուն հեռացնում մարդկային կարգից, որովհետեւ մարդը մտքո՛վ է մարդ»,- ասում է Պողոս Ադրիանուպոլսեցին: Աստված մեզ միտք եւ գիտակցություն է տվել, որով եւ տարբերվում ենք անբան անասուններից, իսկ հարբեցողը, զրկվելով բանականությունից եւ կորցնելով միտքը, ոչ միայն հավասարվում է անբան անասուններին, այլեւ նրանցից ավելի վատթար ու անմիտ դառնում, գործում է ամեն անարգություն, չի ճանաչում բարեկամներին ու ընտանիքը, ամենքին հայհոյում է, սպառնում, ամենքի հետ կռվում, որով բոլոր մարդկանցից ավելի անարգ ու նախատելի է դառնում: Սբ Վ. Այգեկցին հարբեցողությունը կրկնապատիկ մեծ չարիք է համարում, քան դիվահարությունը, որովհետեւ «դիվահարն իր անձն է միայն չարչարում, իսկ հարբեցողը տանջվում է մարմնով, չարչարվում հոգով, մեռնում մեղքերով, գործում անկարգ խառնակություններ եւ դառնում շատերի կորստյան պատճառ»: Այլեւ կորցնում է պատիվն ու ունեցվածքը, այլեւս չի հոգում իր ընտանիքի հոգեւոր ու մարմնավոր կարիքները, այլ օրեցօր ավելի ու ավելի ընկղմվելով այդ ախտի մեջ՝ կամա թե ակամա հրաժարվում է իր ծնողական պարտականություններից, արհամարհում կնոջն ու երեխաներին՝ կրկնապատկելով իր մեղքերի բազմությունը: Սբ Պողոս առաքյալն ասում է, որ եթե մեկը յուրայիններին եւ մանավանդ ընտանիքին խնամք չի տանում, հավատն ուրացել է եւ ավելի չար է, քան անհավատը» (Ա Տիմոթ. Ե 8): Եվ թերեւս առավել խոցվում ու տառապում են հարբեցողի հարազատները, կինն ու երեխաները՝ տանջվելով հոգով ու մարմնով: Չարբեցողը պատճառ է դառնում իր հարազատների նվաստացման ու ստորացման, իր երեխաների դժբախտության եւ հիվանդության: «Արդարեւ, մարդու փառքը իր հոր պատվից է գալիս» (Սիրաք Գ 13): Մեր իրականության մեջ հազվադեպ չի պատահում, որ հարբեցող հոր զավակներն անշեղ, առաքինի ընթացք ունենան՝ ոչ միայն չկրկնելով իրենց ծնողի սխալը, չհետեւելով նրա օրինակին



(թեեւ, ցավոք, երբեմն նկատվում է նաեւ հակառակ իրողությունը), այլեւ ապացուցելով հասարակությանը, որ իրենք ոչ միայն կարող են, այլեւ պարտավոր են գովելի ընտանիք ունենալ, բարոյական կյանք վարել՝ սովորելով իրենց հոր սխալի վրա՝ հիշեցնելով բոլորին, որ զավակները պատասխանատու չեն ծնողների սխալների համար, ինչպես Սբ Գիրքն է ասում. «Որդին հոր մեղքը չպիտի կրի» (Եզեկ. ԺԸ 20): Պողոս Ադրիանուպոլսեցին ասում է. «Չարաբարո հոր բարի զավակ լինելը զավակի պատիվն է ավելացնում, որովհետեւ ինքնուրույն սովորեց բարի լինել»:

Ո՞վ գիտե, գուցե մի օր Տիրոջ ողորմածությամբ եւ շնորհով անուղղելի համարվող հարբեցողն ուղղության գա, դարձ ապրի եւ հավատի գա, հրաժարվի իր նախկին պարսավելի ու ամոթալի ընթացքից, խորապես զղջա իր սխալների համար՝ որոշելով այլեւս չվերադառնալ «իր փսխածին» եւ «չթավալվել տիղմի մեջ» (տե՛ս Բ Պետ. Բ 22):

Ողորմած Աստված սպասում է յուրաքանչյուր մեղավորի դարձին եւ ապաշխարությանը, յուրաքանչյուր կորած եւ մոլորյալ անառակի վերադարձին եւ անկեղծ խոստովանությանն ու զղջումին: «Մի՞թե ես մեղավորի մահն եմ տենչում,- ասում է Տեր Աստվածը,- եւ ոչ թե այն, որ նա չար ճանապարհից հետ դառնա ու ապրի» (Եզեկ. ԺԸ 23): Երկնավոր Չայրն ընդառաջ է գալիս անառակության եւ մոլորության ճանապարհից ետ դարձած Իր զավակներին, Իր անհուն ու անսահման ողորմածությամբ ու գթառատությամբ ներում եւ քավում է ճշմարիտ զղջում եւ դարձ ապրած մեղավորներին՝ հայրաբար խնամելով եւ դարմանելով նրանց հոգու եւ մարմնի վերքերը: «Ասում եմ ձեզ, որ այսպես ուրախություն կլինի երկնքում մի մեղավորի համար, որն ապաշխարում է, քան իննսունինը արդարների համար, որոնց ապաշխարություն պետք չէ» (Ղուկ. ԺԵ 7),- ասում է Տերը:

Սթափվենք եւ դառնանք առ Աստված, քանի դեռ ուշ չէ, հիշենք առաքյալի սաստող խոսքերը. «Մարմնի գործերը հայտնի են. այսինքն՝ շնություն, պոռնկություն, պղծություն, վավաշոտություն, կռապաշտություն, կախարդություն, թշնամություն, կռիվ, նախանձ, բարկություն, հակառակություններ, երկպառակություններ, բաժանումներ, չար նախանձ, սպանություններ, հարբեցողություններ, անառակություններ եւ սրանց նման ուրիշ բաներ», եւ գիտենանք, որ «նրանք, որ այսպիսի բաներ են գործում, Աստծու արքայությունը չեն ժառանգելու» (Գաղ. Ե 19-21):

***Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆ***

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 5*

Ուզերլիկ-թեփեից հայտնաբերված թրծակավե կնոջ արձանիկը հիմնականում կրկնում է շենգավիթյան մշակույթի ավանդույթները՝ տափակ իրան, թույլ արտահայտված ձեռքեր եւ ոտքեր, կոնաձեւ, առանց դիմագծերի պատկերման սխեմատիկ գլուխ: Սակայն արդեն առկա են նաեւ նոր, ռեալիստական հատկանիշներ. կնոջը բնորոշ կոր, լայն կոնքեր, ընդգծված մեջք, ուսի վրա անփութորեն գցված հյուսք:

Հայաստանի՝ միջին բրոնզի դարի մշակութային ժառանգությունը՝ կիրառական արվեստի եւ գեղարվեստական մետաղագործության (տորեւտիկա) նրբաճաշակ գլուխգործոցներով, հայ ժողովրդի բազմադարյան ստեղծագործության ամենավառ էջերից է, երբ ցեղի ստեղծագործ ոգին պոռթկում էր անասելի ուժգնությամբ՝ կերտելով մինչ այդ զուգահեռը չունեցող արվեստի գլուխգործոցներ՝ լի հնավանդ վեհությամբ ու հիասքանչ պատկերագրությամբ:

Կիրառական արվեստում առանձնահատուկ տեղ է գրավում բազմագույն (պոլիխրոմ) եւ միագույն (մոնոխրոմ) գունազարդ խեցեղենը՝ որպես այդ ժամանակաշրջանին ամենից բնորոշ եւ առաջատար ձեւ: Գունազարդ խեցեղենի զարդանախշը գունախաղով եւ արտահայտչականությամբ ընդհուպ մոտենում է գեղանկարչությանը (Գետաշենի հիդրիան, Էլարի, Ապարանի, Գավառի, Արուճի, Վերին Նավերի սափորները եւ այլն): Գունազարդ անոթները պատրաստում էին կարմիր, լավ հունցած, մանրահատիկ ավազախառն կավից՝ դանդաղ պտտվող դուրգի վրա: Թրծումը բարձրորակ է, խեցին՝ կարմիր: Տարածված ձեւերն էին կիսագնդաձեւ, գնդաձեւ, երկկոն եւ ձգված իրանով քրեղանները, սափորները, հիդրիաները: Նախքան թրծելը՝ անոթի մակերեսը ծածկում էին վառ կարմիր անգոբի բարակ շերտով՝ պատրաստի անոթն ընկղմելով հանքային ներկանյութերով գունավորված նրբահատիկ կավալուծույթի մեջ, ապա կոկում էին եւ փայլեցնում: Ստացված փայլուն եւ ողորկ հիմնագույնի վրա, վրձնի օգնությամբ, հիմնականում սեւ, հազվադեպ՝ սպիտակ, դեղին, շագանակագույն եւ կարմիր գույնի հանքային ներկերով կատարվում էր զարդանկարը, որից հետո կավանոթը թրծում էին հատուկ վառարաններում՝ խստորեն պահպանելով թրծման ռեժիմը եւ ջերմաստիճանը: Տեխնոլոգիայի խախտման հետեւանքով կավանոթների մակերեսի հիմնագույնը ստնում էր խամրած երանգ, իսկ մակերեսի վրա առաջանում էին սեւ բծեր: Առավել տարածված էր վառ կարմիր հիմնագույնի վրա սեւ ներկով կավանոթի մակերեսի զարդարումը, որը, որպես ծոփոր, օղակում էր անոթի իրանի ուսերը:



Հայկական լեռնաշխարհի՝ միջին բրոնզի դարի կիրառական արվեստին բնորոշ է զարդանախշի երկրաչափական ձեւավորման փուլը (ստադիա): Խեցեղենի զարդարվեստում երկրաչափական ձեւերի առաջացումը, պլաստիկայում մարդկանց եւ կենդանիների ինքնատիպ սխեմատիկ պատկերումը, որոշակի ստադիալ երեւույթ է, որով անցնում են գրեթե բոլոր ժողովուրդների քաղաքակրթություններն իրենց զարգացման համապատասխան փուլում: Հայաստանը խորապես ապրեց այդ համապարփակ երեւույթը: Խեցեղենի երկրաչափական զարդանախշումը, որը սկիզբ է առել դեռեւս էնեոլիթից, առանձնակի շուք է ստանում միջին բրոնզի դարում: Այս ժամանակաշրջանի ճոխ զարդարումով գեղարվեստական խեցեգործությունը լայն տարածում է ստանում: Տարբեր հնագիտական մշակույթների պատկանող խեցանոթները թե՛ ձեւով եւ թե՛ զարդանախշի ոճավորումով տարբերվում են միմյանցից: Այսպես. եթե կարմիրվանքյան եւ կարմիրբերդյան մշակույթների խեցեղենին բնորոշ են տարրերի եւ մոտիվների հստակ սահմանաբաժանումը, պատկերների ռիթմիկ կրկնությունը, ապա սեւան-արցախյան եւ թռեղքյան մշակույթի խեցեղենի երկրաչափական զարդերին բնորոշ են հոսունությունը եւ բաբախող շարժունությունը: Զարդանախշերը կազմված են ուղիղ եւ ալիքաձեւ գծերի ամենատարբեր համադրումից, ինչպես նաեւ մարդկանց, կենդանիների եւ թռչունների խիստ ոճավորված պատկերներից: Կարմիրբերդյան եւ կարմիրվանքյան մշակույթների խեցեղենի զարդաձեւերը կազմված են մեկից չորս հորիզոնական ծոփորներից (ֆրիզ), վերեւից եւ ներքեւից շրջափակված իրար զուգահեռ հորիզոնական գծերով, որոնց մեջ պատկերված են հորիզոնական դասավորությամբ զարդանախշերի մեկուսի պատկերված տարրեր՝ երկու կողմից շրջափակված դատարկ տարածություններով: Կարմիրբերդյան մշակույթում առանձնանում են 14 խմբերում միավորված տարրերի ավելի քան 240 տարբերակներ, որոնց համադրումից կազմվում են առաջին հայացքից միանման թվացող, սակայն մեկը մյուսին գրեթե չկրկնող կոմպոզիցիաներ: Երեւույթ, որն առանձնապես ցայտուն արտահայտվեց հազարամյակներ անց՝ միջնադարյան Հայաստանի խաչքարային արվեստում:



*Շարունակելի*

***Հակոբ ՍԻՄՈՆՅԱՆ***
***Պատմական գիտ. թեկնածու,***
***արվեստաբանության դոցենտ***

# ԽՈՍՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

*«Երիտասարդնե՛ր, գրեցի ձեզ, որովհետեւ դուք զորավոր եք, եւ Աստծո խոսքը բնակվում է ձեր մեջ, եւ դուք հաղթեցիք չարին»*

***(Ա Հովհ. Բ 14):***

Սիրելի՛ երիտասարդներ, այսօր ձեր օրհնության օրն է, ուստի այս խնկաբույր կամարների ներքո ձեր հոգիներին թող պատի մի առանձնահատուկ ուրախություն: Ցանկանում ենք, որպեսզի այդ ցնծության հոգին միշտ առաջնորդի ձեզ եւ տարածվի ձեր շրջապատի ու հայ ազգի բոլոր զավակների վրա: Եկեղեցու կյանքում ձեր կենդանի ներկայությունը ուժ, եռանդ ու թարմություն կհաղորդի հավատացյալ բանավոր հոտին: Նաեւ Աստծո օրհնությամբ ու ողորմությամբ ձեր բոլոր աստվածահաճո գործերն ի բարին կկատարվեն: Ուստի միշտ մեր կողքին եղեք, մեր օգնականն ու մեզ զորացնողը դարձեք:

Մենք լավ ենք գիտակցում, որ երիտասարդին դժվար է Եկեղեցու, Սուրբ Գրքի եւ ծնողների ուղենշած ճանապարհով ընթանալ, քանի որ նրա միտքն անհաստատ է, բոլոր խոսքերում ու գործերում՝ դյուրափոփոխ, զգայարանները՝ տեսակ-տեսակ ցանկությունների հակված: Նա նման է գետի հոսանքին ու ծովի ալիքներին. իր կյանքի ճանապարհով չի կարող ուղիղ ընթանալ. երբեմն աջ է խոտորվում եւ երբեմն՝ ձախ, մե՛կ դեպի չարը եւ մե՛կ՝ դեպի բարին, դեպի առաքինություն եւ դեպի մոլություն: Հողմից շարժվող եղեգի նման թեթեւ ու անհաստատ է:

Փորձենք հասկանալ, թե ինչո՞ւ է այդպես, ինչո՞ւ երիտասարդն իր մեծ ուժն ու կարողությունը չի ծառայեցնում Աստծուն եւ բարի գործեր կատարելուն: Սա նախ տարիքի պատճառով է լինում, քանի որ ինչպես ֆիզիկապես է աճում ու զարգանում, այնպես էլ գիտակցությունն ու իմացությունն են փոփոխվում: Ըստ Տաթեւացու՝ սովորաբար մարդն իր ողջ կազմվածքի՝ հոգու, մարմնի եւ մտքի կատարելությանն է հասնում երեսուն տարեկանում: Մինչեւ յոթ տարեկան հասակը՝ սնունդ ստանալով, զարգանալով ու աճելով, կազմավորվում են մարմնի անդամները: Երբ տասներեք-տասնչորս տարեկան է լինում, մարմնի ցանկական ֆունկցիաներն են լրումին հասնում, եւ նա կարող է զավակ ունենալ: Երեք յոթնյակը լրանալիս՝ հոգու ցասմնական զորությունն է կատարյալ դառնում, մարմինն է զորեղանում, եւ կարող է զինվոր լինել՝ պաշտպանելու իր ընտանիքն ու հայրենիքը: Իսկ չորս յոթնյակը լրանալիս՝ երեսունին մոտ, կատարելանում է բանականությունը: Թեպետ մինչեւ երեսուն տարեկանը նրա մեջ կատարյալ էին առույգությունն ու հզորությունը, սակայն անկատար՝ իմացականությունը: Եվ քանի որ մարդու միտքը նրա ողջ կազմվածքի կառավարողն ու իշխանն է, ուստի քանի դեռ այն անկատար էր, անհաստատ ու փոփոխական էին նաեւ նրա բոլոր խոսքերն ու գործերը:

Դավիթ մարգարեն մեզ հրահանգում է. *«Ինչո՞վ կարող է ուղղել երիտասարդն իր ընթացքը, եթե ոչ Տիրոջ խոսքերը պահելով»:* Ունկնդիր լինենք մարգարեի խոսքերին, Տիրոջ պատվիրանների ճանապարհով ընթանանք, քանի որ երիտասարդ տարիքում խիստ զորեղ են մարմնի զգայարանները եւ կարող են զանազան ցանկություններով տարվել, շեղել միտքն ու տարբեր մեղքերի մեջ գցել: Շատ անգամ էլ երիտասարդները բռնկվում են ազատատենչության գաղափարներով: Փորձենք խորությամբ քննել, թե ինչ ակունքից են բխում այդ ձգտումները. քրիստոնեական առաքինի կենցաղավարությա՞ն, թե՞ անզուսպ մեղսալից բնության: Ցավոք, այսօրվա շատ երիտասարդների նկրտումները մեղքի եւ հեշտասիրության բովանդակություն ունեն: Խորամուխ լինենք, թե ինչին ենք ազատություն տալիս. մեղքի՞ն ու անժուժկալությա՞ն: Լավ գիտակցենք, որ մեր բանականությունը՝ մեր ողջ էության կառավարողը, դեռ Աստծո պատվիրանների մեջ չի կայացել, դեռ Եկեղեցու հայրերի ու ծնողների խրատներով չի շտկվել եւ ուղղվել: Ուստի, երբ ծնողները եւ Եկեղեցու հայրերը, իրենց կյանքի փորձառությունից ելնելով, խրատում են մեզ ինչ-ինչ չճշտված ցանկություններից հրաժարվել, խոնարհվենք ու հնազանդվենք, քանի որ այդ խրատների բարի պտուղները մենք հետագայում պետք է քաղենք:

Բարի կյանք եւ առաքինություն ձեռք բերենք, եւ մեր ցանկություններն էլ անմեղ ու բարի կլինեն: Այդ ժամանակ ազատության վերաբերյալ մեր պատկերացումները լրիվ այլ կլինեն: Ուրիշներին բարիք գործելը, աղոթելը, Աստծուն ու մարդկանց սիրելը կդառնան մեր ազատության ձգտումների իրագործումը: Այն ժամանակ աշխարհը մեր աչքերի առջեւ միանգամայն այլ գույներով կներկվի, երկնային երանությունը, ցնծությունը եւ ուրախությունը կբնակվեն մեր սրտերում: Կիմաստավորվի մեր կյանքը, կատարյալ կդառնա մեր իմացականությունը, սիրելի եւ օրհնակելի կլինենք բոլորի համար, ու լիառատ սրտով Աստծուն կարող ենք ասել. «Տե՛ր, մեր կյանքի լավագույն տարիները քեզ ենք նվիրում»:

Հովհաննես առաքյալն ասում է. *«Երիտասարդնե՛ր, գրեցի ձեզ, որովհետեւ դուք զորավոր եք, եւ Աստծո խոսքը բնակվում է ձեր մեջ, եւ դուք հաղթեցիք չարին»:* Ընհանրապես երիտասարդ են կոչվում ոչ միայն տարիքով երիտասարդները, այլ նաեւ մկրտության ավազանի ջրով մեղքի հնությունից նորոգվածները, քանի որ նրանք առաքինի գործերով ու աստվածպաշտությամբ դառնում են առույգ ու պատանի: Եվ երբ սրան ավելանում է երիտասարդական ավյունն ու եռանդը, ապա մեր սրտերում բնակված Աստծո խոսքով ու զորությամբ կարողանում ենք հաղթել չարին:



Սողոմոն առակագիրն ասում է. *«Քո երիտասարդության տարիքում պատվիր քո Տեր Աստծուն»:* Սա կոչ է բոլոր երիտասարդներին, որպեսզի չտարվեն երիտասարդական ցանկություններով ու չասեն. «Հագուրդ տանք մեր ցանկություններին, քանի երիտասարդ ենք, իսկ հետո, երբ մեծանանք, կապաշխարենք»: Այսպես մտածողը թող լավ իմանա, որ հետագայում կարող է ապաշխարության ցանկություն, կարողություն ու հնարավորություն այլեւս չունենա, քանզի հույսով մեղանչողն անհույս կկորչի:

Պատահական չէ, որ մեր Եկեղեցին, քաջ գիտակցելով երիտասարդության մեծ դերն ու նշանակությունը հայ ազգային եւ եկեղեցական կյանքում, Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ սահմանել է նաեւ Երիտասարդների օրհնության օր, որպեսզի նրանք իրենց հաջողություններով ու ստեղծագործական ավյունով լցնեն մեր ազգային կյանքը եւ Աստծո լիառատ շնորհների ընդունման համար խթան դառնան:

*Արման սրկ. ԳԵՎՈՐԳՅԱՆ*

# ՇՈՒԽՈՆՑ ԱՎԵՏԱՐԱՆ

## Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
## ՁԵՌԱԳԻՐ N 6436

**Մեզանում արդեն գեղեցիկ ավանդույթի ուժ է ձեռք բերել տարին մեկ անգամ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցից 200 տարուց ավելի Աշտարակի սրբությունը հանդիսացող, ինչպես նաեւ Ս. Ամենափրկիչ եւ Ս. Կարմրավոր եկեղեցիներում հանգրվանած *Շուխոնց հրաշագործ Ավետարանի* (1669 թ.) դուրս բերումը:**

**Այս տարի՝ Ս. Թարգմանչաց հիշատակի օրը, Ավետարանը ժամը 11.00-13.00 Սուրբ Պատարագի ընթացքում, հանգրվանեց Օշականի Սուրբ Մ. Մաշտոց եկեղեցում: Հավարտ Պատարագի՝ քայլարշավով Ավետարանը տեղափոխվեց Աշտարակ քաղաք: Քայլարշավը դարձավ շարունակությունը գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված Էջմիածին-Օշական ուխտագնացության:**

**15.00-ին Աշտարակի հրապարակում Սբ Ավետարանով կատարվեց անդաստանի կարգ: Իսկ Ս. Մարինե եկեղեցում ժամը 15.30-ին տեղի ունեցավ մատաղօրհնություն եւ հավատացյալներին հնարավորություն ընձեռվեց հաղորդակից դառնալու հրաշագործ Սուրբ Ավետարանին:**

**Միջոցառումներն ուղեկցվեցին եկեղեցու բակում կազմակերպված համերգային ծրագրով:**

Ձեռագիր Ավետարանը գրվել է 1669 թ. Իսպահանի (Շոշ) Ջուղա գյուղում՝ Ս. Ամենափրկիչ վանքի կրոնավոր Բարսեղի ձեռքով եւ Խոջա Մանասի պատվերով: Ս. Գիրքը նկարազարդ է, ունի 13 մանրանկար: Ավետարանում պահպանված գրչի հիշատակարանից (էջ 280 ա) պարզ է դառնում, որ այն գրվելու ընթացքում դեռեւս հայտնի չէր, թե Ավետարանը որ եկեղեցու համար էր նախատեսված, քանզի եկեղեցու անվան տեղը բաց է թողնված:

Հետագայում գրված երկու հիշատակարաններից (էջ 270 ա, 1675 թ, 1677 թ.) պարզվում է, որ Ավետարանը դեռեւս գտնվում էր նույն վայրում:

Թե Ավետարանը ե՞րբ եւ ի՞նչ ճանապարհով է հասել Աշտարակ, հայտնի չէ:

Ս. Ավետարանի առաջին էջում կա հետեւյալ հիշատակարանը. *«Այս սուրբ Ավետարանս գրչագիր որ ի նախնեաց մերոց յԱզարիայէ եւ յԱնանիայէ եղբարց ի զարմէ Շուխեանց տան՝ յորդւոց եւ ի թոռանէ նոցին ի Յովհաննիսէ եւ ի Սերկէէ Շուխեանց տուաւ յիշատակ Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ գիւղ Աշտարակ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. Ամէն»:*

Վերոհիշյալին այլ ձեռագրով հաջորդում է մեկ այլ հիշատակարան. *«Եւ ես ներկա լինելով հաւանեցի եւ ստորագրութեամբս վավերացուցեալ հաստատեցի գլիշեալ գրվածն տեղական քահանայի Սարգիս ավագ քահանայի ի 10 մարտի 1875 ամի = յԱշտարակ = Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց»:*

Այս երկրորդ հիշատակարանը հուշում է, որ առաջինի հեղինակը Սարգիս ավագ քահանան է, որի վկայությամբ Հովհաննես եւ Սարգիս (պատմության մեջ Շուխոնց Սերգեյ) Շուխյաններն իրենց պապերից՝ Ազարիայից եւ Անանիայից, ժառանգություն ստացած գերդաստանի Սուրբ Ավետարանը նվիրում են Աշտարակի Ս. Ամենափրկիչ եկեղեցուն (որը գտնվում էր հին քաղաքային շուկայի տեղում):

Եթե հաշվի առնենք, որ 1866 թ. Աշտարակ գյուղի տանուտեր դարձած Սարգիսը 1875 թ. մոտավորապես կլիներ 50-60 տարեկան, եւ նա էլ այդ սրբությունը ժառանգել էր իր պապից, ապա կարելի է եզրակացնել, որ Սուրբ Ավետարանը մոտավորապես 1750-60 թթ. արդեն իսկ գտնվում էր Աշտարակում եւ Շուխյան գերդաստանի սեփականությունն էր: Ավետարանը Ս. Ամենափրկիչ եկեղեցուն նվիրաբերմամբ դարձավ ողջ Աշտարակի սրբությունը՝ մշտապես պահելով իր անվանումը՝ ***Շուխոնց Ավետարան:***



Երվանդ Շահազիզը (1856-1951 թթ.) Աշտարակի պատմության մեջ 1873 թվականն է նշում որպես նվիրաբերման տարի: Նա, խոսելով Ս. Կարմրավոր եկեղեցու մասին, նշում է.

*«Կարմրավորում պահվում են երկու, արժանի ուշադրության հնություններ: Դրանցից առաջինը մի հնդու խալամքյար (նկարած) վարագույր է, որ 1798-99 թթ. Կալկաթայից եւ Դաքայից բերել է Ամենափրկչի համար Հնդկաստան նվիրակության պաշտոնով գնացած աշտարակցի Տփանենց Հարությունի որդի Վրթանես եպիսկոպոսը: Այդ վարագույրը, Ամենափրկչի քանդվելուց հետո փոխադրվել է Կարմրավոր եւ այժմ կախված է դրա սեղանի առաջ... Երկրորդը մի ձեռագիր Ավետարան է, որ առաջ աշտարակցի Շուխյանց ընտանիքին պատկանած լինելու պատճառով կոչվում է* ***Շուխոնց Ավետարան****: 1873 թվին դա տրվել է ի հիշատակ Ամենափրկիչ եկեղեցուն եւ այդտեղից էլ, վերոհիշյալ վարագույրի հետ միասին, փոխադրվել է Կարմրավոր»* (Երվանդ Շահազիզ, Աշտարակի պատմություն, 1987 թ., էջ 173):

1910-48 թթ. Աշտարակից ու նրա եկեղեցիներից պետության կողմից հավաքվել է թվով 16 գիրք, այդ թվում 1922-25 թթ. հնությունների պահպանության կոմիտեի կողմից հավաքագրված 8 գրքեր, որոնցից մեկն էլ Շուխոնց Ավետարանն էր: Այն հետագայում մյուս բոլոր գրքերի հետ տեղափոխվեց Մաշտոցի անվան Մատենադարան եւ նրանց շարքում իր մնայուն ու արժանավայել տեղը գտավ թիվ 6436 համարի տակ:

***Տ. Մկրտիչ քհն. ԵՐԱՆՅԱՆ***
***Աշտարակի հոգեւոր հովիվ***

## ՎԱՆԱԶԱՅՐ ԵՎՄԵՆԻ

# ՀԱՐՑԵՐ ԻՆՔԴ ՔԵԶ



Պատասխանատու մարդկանց համար Աստված նախապատրաստել է Իր օրհնությունները: Աստծու կամքն այն է, որ մեզանից յուրաքանչյուրը գիտակցի իր պատասխանատվությունը եւ հենց այսօր իսկ այդ ուղղությամբ անի իր առաջին քայլերը:

Եկեք դիտարկենք մեր կյանքի այս կամ այն ոլորտը, եւ կնկատենք ակնհայտ տեղապտույտ: Գուցե այդտեղ պատասխանատվության խնդի՞ր կա: Գուցե՞ սպասում ենք, որ ինչ-որ մեկը մեր փոխարեն լուծի մեր խնդիրները: Դուք ապավինո՞ւմ եք Աստծուն, որ Նա «ամեն ինչ կտնօրինի», իսկ ինքներդ ոչինչ չեք անում: Սակայն, եթե դուք խուսափում եք սեփական պատասխանատվությունից, ապա Նա այլեւս իմաստ չի տեսնում միջամտելու ձեր կյանքին եւ նույնիսկ օգնելու ձեզ, այլապես դուք ոչինչ չեք սովորի:

Ստորեւ առաջարկում եմ ձեզ պատասխանատվության թեսթ: Այս հարցերն ամեն ոք կարող է տալ ինքն իրեն, ով կամենում է իմանալ.

### «Արդյո՞ք պատասխանատու մարդ եմ»

**1**. Արդյո՞ք համաձայն եմ այն մտքի հետ, որ ինքս եմ պատասխան տալիս Աստծո եւ սեփական խղճիս առջեւ իմ բոլոր խնդիրների եւ այն ամենի համար, ինչ էլ որ տեղի ունենա իմ կյանքում:

**2**. Որեւէ որոշում կայացնելիս, արդյոք նախ մտածո՞ւմ եմ այն մասին, թե դա ըստ Աստծու կամքի է՝ շարադրված Նրա Խոսքում:

**3**. Օրվա, շաբաթվա ընթացքում որքա՞ն ժամանակ եմ հատկացնում Սուրբ Գրքի ընթերցանությանը, որքանը՝ Աստծո հետ անձնական շփմանը:

**4**. Արդյոք հոգեւորականի օրհնությունը չե՞մ օգտագործում որպես միջոց՝ ազատվելու սեփական կյանքի հանդեպ ունենալիք իմ ինքնուրույն պատասխանատվությունից:

**5**. Իմ կյանքի ինչպիսի արտաքին պահվածքներով ինձ շրջապատողները կարող են կռահել, որ քրիստոնյա եմ:

Քրիստոնեական քարոզը նախ եւ առաջ դրսեւորվում է արտաքին արարքներում, խոսքերում, սրտի տրամադրվածությամբ: Ի՞նչ չափով եմ պատասխանատու, որ իմ պատճառով Աստծու անունը չվատաբանվի անհավատների շրջանում:

**6**. Ի՞նչ է ինձ համար հաղորդվելը Քրիստոսի Սուրբ Խորհուրդներին՝ Ավետարանի սիրող Աստծու հետ միավորո՞ւմ, թե՞ ինչ-որ «մոգական» արարողություն (որ «հանգստանամ», որ «չհիվանդանամ», որ ամեն բան լավ լինի»):

**7**. Երբ ինձ դժվար է, որտեղի՞ց եմ հոգեւոր ուժ առնում:

**8**. Արդյո՞ք գիտակցում եմ իմ սեփական մահվան, հավիտենության իրական լինելը, պատրաստվում եմ արդյոք սիրող Աստծո հետ հանդիպմանը, թե՞ վանում եմ ինձնից «վատ» մտքերը:

**9**. Արդյո՞ք ձգտում եմ հաղորդակցվել Աստծո եւ մարդկանց հետ, թե՞ բոլոր միջոցներով փախուստ եմ տալիս ե՛ւ Նրանից, ե՛ւ նրանցից:

**10**. Ի՞նչ կմնա իմ վախճանից հետո: Արդյո՞ք իմ մահվան օրը ի զորու կլինեմ հստակ պատասխանել «Ինչո՞ւ եմ ապրել», «Իրականացրե՞լ եմ արդյոք Աստծո՝ իմ կյանքի մասին ծրագիրը», «Այդ մասին արդյոք հարցրե՞լ եմ Նրան» հարցերին:

**11**. Որքան հեշտ եմ համաձայնվում ուրիշ մեկի կնքահայրը լինել: Երբեմն մարդը հեշտությամբ համաձայնվում է լինել կնքահայր եւ, սակայն, բնավ ոչ մի պատասխանատվություն չի կրում իր սանիկների հանդեպ: Երբեմն էլ մարդը չափազանց է խուսափում պատասխանատվությունից եւ ասում, որ ոչ մեկին կնքահայր լինել չի կարող, քանի որ դա չափազանց պատասխանատու քայլ է: Դրա համար էլ կնքահայր լինելու համաձայնությունը կարող է դրդված լինել ինչպես պատասխանատվությունից, այնպես էլ՝ անպատասխանատվությունից:

**12**. Արդյոք կանոնավոր կերպով հաճախո՞ւմ եմ եկեղեցի, կանոնավոր կերպով աղոթում, հոգ եմ տանում սանիկներիս եւ այն մարդկանց մասին, ովքեր իմ օգնության կարիքն ունեն, թե՞ միայն «ըստ տրամադրության»:

Պատասխանատու մարդուն բնորոշ հատկությունները հաստատունությունն ու պարտավորվածությունն են:

**13**. Եթե հարկավոր է համբերել՝ արդյո՞ք դա միշտ եմ անում գոհունակությամբ: Կարողանո՞ւմ եմ ընդունել այն, ինչ Աստված է առաքում ինձ, թե՞ տրտնջում եմ, վրդովվում, չեմ համաձայնվում իմ հանդեպ ունեցած Աստծու կամքին:

**14**. Արդյո՞ք ընդունակ եմ գիտակցել պատասխանատվության իմ բաժինը՝ անձնական կյանքիս բոլոր հակամարտությունների, չհասավորվածության, ողբերգությունների համար:

**15**. Արդյոք դժվա՞ր է ինձ կենտրոնանալ որեւէ բանի վրա, եւ թե՝ ինչի՞ հետ է դա կապված: Մինչեւ վերջ հասցնո՞ւմ եմ սկսած գործերս, եւ եթե՝ «ավելի հաճախ՝ ոչ», ապա հետագայում պատրա՞ստ եմ պատասխանատվություն վերցնել:

**16**. Որքա՞ն հաճախ եմ պահանջում չափից, սովորականից ավելի ուշադրություն անձիս հանդեպ եւ ինչո՞ւ եմ դա անում:

**17**. Ինչո՞վ եմ առաջնորդվում իմ որոշումներում՝ բանականությամբ, առողջ դատողությամբ, թե՞ զգացմունքներով ու ապրումներով:

**18**. Որքա՞ն արագ եմ սկսում շտկել իմ պահվածքը՝ գիտակցելով սեփական անարդարացիությունը:

**19**. Արդյո՞ք հակամարտային իրավիճակում շարունակում եմ մնալ իմ կարծիքին, թե՞ ընդունակ եմ գնալ փոխզիջման, որը կարող է ստեղծված իրավիճակում խաղաղության հասնելու միակ հնարավորությունը լինել:

**20**. Արդյո՞ք ուրիշները կարող են, եւ որքանով, հավատալ ու վստահել ինձ:

**21**. Արդյո՞ք ջանում եմ հասկանալ, թե այլ մարդիկ ինչ են զգում ու ապրում իմ հանդեպ այն բանի համար, որ նրանց ոչ թե ցավ, այլ՝ ուրախություն ու մխիթարություն պատճառեմ:

**22**. Արդյո՞ք հանգամանքների կամ էլ մարդկանց վերաբերմունքների փոփոխություններն իմ հանդեպ ազդում են իմ ամուսնական (կամ վանական) ուխտի կամ ծնողական պարտականությունների վրա:

**23**. Արդյո՞ք պատասխանատվությամբ եմ վերաբերվում իմ առողջությանը, չե՞մ քայքայում այն վնասակար սովորույթներով:

**24**. Արդյո՞ք աջակցում եմ իմ ընտանիքի անդամներին (եղբայրությանը, աշխատակիցներին), երբ դրա կարիքն ունեն, թե՞ ավելի հաճախ նախընտրում եմ արդարանալ զբաղվածության եւ հոգնածության պատրվակի տակ:

**25**. Արդյո՞ք կատարում եմ տանտիրոջ (տանտիրուհու) իմ պարտականությունները:

Անկողմնակալ լինելու համար ավելի լավ է այդ մասին հարցնել կնոջը (ամուսնուն):

*Հարց կանանց.*

**26**. Արդյո՞ք մեր տանը միշտ կա նախաճաշ, ճաշ, ընթրիք, առավոտյան՝ մաքուր վերնաշապիկ ամուսնու համար:

**27**. Արդյո՞ք տնային հոգսերն ինձ ուրախություն են պատճառում, թե՞ ես այդ բոլորը մի կերպ անում եմ միայն նրա համար, որպեսզի տանը վիճաբանություններ չլինեն:

**28**. Արդյո՞ք մեր տանը կան ընտանեկան ավանդույթներ, համատեղ ճաշկերույթներ, ընտանեկան տոնակատարություններ, դրանց մասնակցում են երեխաները, թե՞ նույն հարկի տակ ապրում ենք իբրեւ օտարներ:

**29**. Ինչպե՞ս են մեր ընտանիքում ծախսվում ընդհանուր գումարները: Արդյոք ես չե՞մ սպառում ընտանեկան բյուջեն իմ հայեցողությամբ եւ բացառապես իմ կարիքների համար՝ անտեսելով ընդհանուրի պահանջները:

**30**. Մեր տան անկարգությունն ինչի՞ հետեւանք է: Դա ժամանակավո՞ր երեւույթ է, թե՞ մշտական:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝***
***Քնարիկ ՂԱԶԱՐՅԱՆԻ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ

**հեռախոս՝ (0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 16. 10. 2006 թ.

**Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ**